Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԳԱՐԵՂԻՆ ԱՇԽԱՐՀԱԳԻՏ ԱՇՏԵՄԵՆԻ

ՇԱՀԷ ԱՐՔԵՊԻԿՈՊՈՍ

ԴՈՒԿԱՍԸ , ՊԸՆՔԵՈՍԸ

Էսպվիճաբանու-Ընան ֆակո-լսեպի պեկան՝

Ս ոյն գրվո-յկբնրականացա- արպեսմբ ե- ձախի-վ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՃԵՄՅԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ

ԵՐԵՎԱՆ - 2003

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ Ի. Գ.

ՀՐԱՇԱԳՈՐԾ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ

Խմբագրությամբ՝
Շահե Արք. Աճեմյանի

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ – 2003 Թ.

ԳՏՀ 23/28
ԳՄԴ 86. 37
Ղ 471

Հրատարակված է ԵՊՀ-ի
հնագիտության ամբիոնի
երաշխավորությամբ

Խմբագիր **Շահե Արքեպիսկոպոս Ածեմյան**

Ղարիբյան Ի. Գ.

Ղ 471 Սուրբ Գեղարդ: Երևանի պետական համալսարանի Աստվածաբանության և պատմության ֆակուլտետներ: Եր. Երևանի համալսարանի հրատ., 2003, 64 էջ:

Համալսարանի հնագիտության ամբիոնի վարիչ պրոֆ. Իգիթ Ղարիբյանի սույն գրքույկը նվիրված է Հայ Առաքելական եկեղեցու ամենապաշտելի և նվիրական մասունքներից մեկին՝ Սբ. Գեղարդին ու նրա մասունքատուփի պատմությանը: Աշխատանքը շարադրված է հայ և օտարազգի պատմիչների ու լիատածագիրների վկայությունների հիման վրա:

Հեղինակը փորձ է արել քննելու Սբ. Գեղարդի պատմությունը հայոց եկեղեցու պատմության ողջ հետքի վրա և հիմնավորվելու, որ աշխարհի տարբեր վայրերում պահվող նմանատիպ գեղարդների մեջ, Սբ. Էջմիածնի մայր Տաճարում պահվողը հավանաբար ամենահնագույնն է:

Գիրքը նախատեսված է ուսանողների հայագետների, եկեղեցու պատմությամբ զբաղվողների և ընդհանրապես լայն հասարակության համար:

Ղ $\frac{0401000000}{704(02)}$ 2003 ԳՄԴ 86. 37

ISBN 5-8084-0524-6

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003 թ.
© Ղարիբյան Ի. Գ. 2003 թ.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մասնագիտության բերումով տարիներ շարունակ ղեկավարել եմ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի ուսանողների դաշտային հնագիտաազգագրական պրակտիկան, որի հետ կապված բազմիցս այցելել եմ հանրապետության հնագիտաճարտարապետական մեծ արժեք ու կարևորություն ներկայացնող հուշարձանները: Հասկանալի է, դեպի հուշարձաններ կատարված ամեն մի ուղևորություն ուղեկցվում է ուսանողների կողմից հարցերի տարափով, որոնց պատասխանները իրենց ամփոփ ու կուռ շարադրանքի դեպքում շատ մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուսանողության համար: Իսկ հարցերը իրոք բազմազան են: Դրանք վերաբերում են ինչպես միջնադարյան վանական համալիրներին, նրանց անվան ծագմանը, հուշարձանախմբերի մեջ մտնող առանձին կառույցներին, կառուցող ճարտարապետներին և պատվիրատուներին, քրիստոնեական կրոնին, քաղկեդեդոնականությանն ու Հայոց առաքելական եկեղեցուն, դավանաբանական վեճերին, պատկերամարտությանն և պատկերապաշտությանը: Հարցեր են տրվել նաև քրիստոնեական սրբերի, նրանց հետ կապված ավանդությունների, սրբերի մասունքների ու մասունքատուփերի վերաբերյալ: Սկզբում հիշյալ հարցադրումների վերաբերյալ կարճ գրառումներ եմ կատարել, որոնք ժամանակի ընթացքում հարստացրել եմ աղբյուրագիտական նյութով և շատ չանցած ինքս ինձ համար հայտնաբերել եմ, որ գրեթե բոլոր հուշարձանների և այս կամ այն սրբության վերաբերյալ, կամ արդեն ավարտուն աշխատանքներ են ստեղծվել, կամ էլ անհրաժեշտ աղբյուրագիտական նյութ է կուտակվել:

Այսօր, երբ վերոհիշյալ հարցադրումների վերաբերյալ արդեն ավարտված աշխատություններս անցնում են մի քանի տասնյակից, կամենում եմ ուսանողության և լայն ընթերցողի դատին հանձնել

դրանցից մեկը՝ «Հրաշագործ սբ. Գեղարդը»: Թե ինչու եմ շարքը սկսում հատկապես սբ. Գեղարդով, դժվարանում եմ անգամ պատասխանել: Թերևս պատճառն այն է, որ այն Հայոց եկեղեցու առավել պաշտելի մասունքներից մեկն է Գրիգոր Լուսավորչի Աջի հետ միասին, և այդ Գեղարդն էր պատճառը, որ միջնադարյան Հայաստանի առավել աչքի ընկնող վանական համալիրներից մեկը՝ Այրիվանքը, սկսած XIII դարից կրում է Այրիվանք - Գեղարդավանք անունը:

Այդ ժամանակից սկսած Գեղարդը հանգրվանել էր Այրիվանքում, հանդիսանալով Պռոշյան նշանավոր ավատական ընտանիքին պատկանող բազմաթիվ մասունքներից մեկը՝ Խոտակերաց սբ. Նշանի և Կենաց փայտի կտորի հետ միասին: Միայն XVII դ. վերջին քաղաքական անկայուն վիճակից ելնելով Գեղարդը իր մշտական հանգրվանից՝ Այրիվանք-Գեղարդավանքից տեղափոխում են Էջմիածնի Մայր Տաճար:

Ահա երկու ու կես դար է, Գեղարդը ի թիվս քրիստոնեական բազմաթիվ մասունքների հետ միասին պահվում է Էջմիածնում:

Ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ Էջմիածնում պահվող Գեղարդը շատ ավելի հին ծագում ունի, քան Վատիկանում պահվողը՝ ինչը ճգնում են ապացուցել կաթոլիկ հայրերը:

Ինչևէ, այլևս չխորանալով մանրամասների մեջ, ընթերցողի դատին ենք հանձնում սբ. Գեղարդին նվիրված այս ուսումնասիրությունը: Սրան հաջորդելու են այլ հուշարձաններին ու մասունքներին նվիրված փոքրիկ ու ամփոփ ախատանքներ:

Հեղինակ.

ՀՐԱՇԱԳՈՐԾ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԸ

«Այլ զինուորներից մեկը տեգով խոցեց նրա կողը, եւ իսկույն արիւն եւ ջուր եղաւ»

Աւետարան Հովհանու
ԳԼ 19, 34.

Էջմիածնի Մայր տաճարի թանգարանի ցուցափեղկում ցուցադրվում է երկաթից պատրաստված տեգի ծայր, կրկնակի խաչաձև տեսքի, իր արծաթե դրվագրված պահարանով հանդերձ, որը մեր մատենագրության մեջ և հոգևոր գործիչների ու ժողովրդի կողմից անվանվում է սբ. Գեղարդ: Պահարանի թիկունքին եղած արձանագրության հավաստմամբ այն վերջին անգամ նորոգման է ենթարկվել 1687 թվին: Փորձենք հայ և օտար մատենագիրների հաղորդած կցկտուր տեղեկություններով հետամուտ լինել սբ. Գեղարդի անցած ուղուն, նրա հետ կապված ավանդազրույցներին մինչ մեր օրերը հասնելը:

Մեզ հասած ավանդության համաձայն այդ գեղարդը հռոմեացի զինվորներից մեկի նիզակի ծայրն էր, որով վերջինս խոցեց Հիսուս Քրիստոսի խաչված մարմնի կողը, իբր թե ստուգելու համար նրա մարդկային, թե աստվածային ծագման իսկությունը և իսկույն արյուն և ջուր ելավ: Նույնպես, համաձայն ավանդության, Քրիստոսի ավագ աշակերտներից մեկը՝ Թադեոս առաքյալը Հիսուսի խաչվելուց և համբառնվելուց հետո փշե պսակի հետ միասին այդ Գեղարդը Երուսաղեմից բերում է Եդեսիա Աբգար թագավորին բուժելու համար, ինչպես որ կանխավ ապսպրել էր Հիսուս Քրիստոսը:

Պատմահայր Մովսես Խորենացին այդ մասին վկայում է, որ Եդեսիայի Աբգար թագավորը, որը ժամանակակից էր Քրիստոսին, տարիներ շարունակ տառապում էր անբուժելի հիվանդությամբ և լսելով Հիսուսի հրաշագործությունների մասին հիվանդներին բուժելու գործում, նամակով դիմում է նրան և խնդրում այցելի իրեն Եդեսիա և բուժի հիվանդությունը: Խորենացին այդ մասին վկայելով շարունակում է.«Իսկ ինքն Փրկիչն մեր յայնմ ժամանակի յորժամ կոչեցաց զնա Աբգար՝ ոչ առ յանձն. բայց թղթոյ արժանի արար զնա, որ ունի օրինակ զայս. «... և յորժամ համբարձայց՝ առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ, և կեանս քեզ և որոնց ընդ քեզ են շնորհեսցէ»[1]:

Նույն ավանդության համաձայն Հիսուսը հենց Թադեոս առաքյալին է հանձնարարում այդ պարտավորության կատարումը: Թադեոս առաքյալը գալով Եդեսիա իր հետ ունենալով սբ. Գեղարդը և Փշե պսակը բուժում է Աբգար թագավորին անբուժելի համարվող հիվանդությունից, որով վերջինս տառապում էր տասներկու տարի:

Աբգար թագավորը բուժվելու համար, որպես երախտագիտության տուրք, Խորենացու վկայությամբ, կատարում է հետևյալը. «... և մկրտեցաւ ինքն Աբգար և ամենայն քաղաքն և զդուրս տաճարաց կռոցն փակեցին . և որ ի վերայ բագնին և սեանն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբ. և ոչ զոք ածէր բռնութեամբ ի հաւատս, բայց օր ըստ օրէ յաւելեալ ի հաւատացեալսն բազմանային»[2]: Այդ ժամանակներից ի վեր Գեղարդը իբր պահվում է Հայաստանում:

Նույնն է վկայում նաև Յայսմավուրքի Թադեոս առաքյալին նվիրված դեկտեմբերի 23-ի ճառը ուր կա հետևյալ վկայությունը. «Յորժամ եկն առ նա (Սանատրուկ թագավորի մոտ-ծան. Ի.Ղ.) սուրբ առաքեալն Թադէոս ունելով ընդ ինքեան զԳեղարդն Աստուածամուխ՝ **որով առներ նշանս մեծամեծս և փարատեր զամենայն չար ախտ հիւանդութեանց.** վասն որոյ և բազումք հաւատացին ի Քրիստոս, նաև դուստր թագաւորին Սանդուխտ»:

Ագաթանգեղոս պատմիչին վերագրվող, իսկ հետագա բանասերների կողմից անվավեր համարվող «Դաշանց թղթի» մեջ Գեղարդի մասին կարդում ենք. «Անդ (Հայաստանում -Ի. Ղ.) կայ և զեղարդն Ղուկիանոսի հարիւրապետին՝ որով խոցեցաւ կող փրկչին՝ և բղխեաց ջուր և արիւն, նշանակ մկրտութեան և հաղորդութեան»[3]:

Վերոհիշյալ Գեղարդը Յայսմավուրքի հեղինակները վերագրում են Ղուկիանոս հարյուրապետին, քանի որ վերջինիս խնդրանքով Պետրոս առաքյալը փրկչական խաչի կտորի հետ իրեն էր տվել և որովհետև Ղուկիանոսը ի ծնե կույր էր, դրանով բուժվում է: Այնուհետև այդ մասունքները վերցնելով Ղուկիանոսը գալիս է Գամիրքի (Կապադովկիա) իր հայրենի Սանդալիս կամ Սանդրալիս ագարակը ու հաստատվում այնտեղ, զբաղվում հիվանդներ բուժելով: Բայց շուտով Տիբերիոս կայսեր հրամանով նահատակվում է Ղուկիանոս հարյուրապետը, որի գլուխը բերում են Պիղատոսին: Վերջինս կաշառք առնելով ետ է վերադարձնում այն հավատացյալներին: Այդ նահատակության համար Ղուկիանոսը դասվում է սրբերի շարքը, իսկ Գեղարդը վերագրվում նրան:

Այս դեպքերի մեկ այլ շարադրանքի հանդիպում ենք մեր մատենագրության մեջ «Պատմութիւն Ս. Կենասբերին և սոսկալի Ս. Նշանին, թէ որպէս բերաւ յաշխարհն Արշարունեաց ի Կամրջաձորոյ»[4]: Ալիշանը այս առթիվ գրում է. «...յաջողեաց բաղդիւ գտանել մեջ ի նորաստաց մատենի» տալով Կամրջաձորի տեղադրության վերաբերյալ հետևյալ բացատրությունը՝ կա երկու Կամրջաձոր. «...առա-

[1] **Խորենացի** , գիրք Բ, ԳԼ..ԼԲ:
[2] Անդ, ԳԼ. ԼԴ:

[3] **Ագաթանգեղոս**, Կ. Պոլիս, 1824, էջ 347:
[4] **Ալիշան**, Այրարատ, էջ 547: Նույնը, տես նաև, Գ. Հովսեփեան, Հիշատակարանք ձեռագրաց, հատոր Ա, Անթիլիաս, 1951, էջ 169-178:

ջին ի Լիկանդոն գաւառի Փոքուն Հայոց, ընդ մէջ երկոցուն աշխարհացն Բ և Գ Հայոց, որք են Կեսարիա և Մելիտինէ. ուր ի վաղեմի դարուց հաստատեալ վկայի վանք և անդ պատուեալ և պահեալ և սքանչելոք հռչակեալ կենսաբեր Ս. Նշանին: Նշանս այս, ըստ պատմութեանն՝ մասն էր Խաչին Քրիստոսի հատեալ ի նմին իսկ ի Պետրոսէ առաքելոյ, ըստ խնդրոյ Ղուկիանոսի Հարյուրապետի և տուեալ սմա, ագուցանելով յակն Խաչին մասունս յայլոց ևս տէրունական սրբութեանց. զոր առեալ Ղուկեանոսի ընդ աստուածամուխ Գեղարդանն՝ գայ ի հայրենիս իւր ի Գամիրս...»[5], իսկ երկրորդը բնականաբար Արշարունիքի Կամրջաձորն է:

Վերոհիշյալ «Պատմութեան» հավաստմամբ Ղուկիանոսը. «Գայ ի գաւառն Գամրաց՝ Երկրորդն կոչեցեալ Հայք, և բնակէ ի լերինս, քսան և ութ ամս յանապատին: Եւ զօրութեամբ սուրբ Կենսաբերին հանէր ի մարդկանէ զդեւս, և բժշկութիւնս բազումս կատարէր: ... Եւ իբրեւ լուաւ զհամբաւ Ս. Կենսաբերին դատատրն Գամրաց, որում անուն էր Ոկտաւիոս, հրամայեաց կոչել զՂուկիանոս»: Հարցուփորձ անելով ի վերջո գլխատում են նրան և թաղել տալիս. «...ի պատուաւոր տեղւոջ, և ինքն հաւատացեալ ի Քրիստոս մկրտեցաւ ամենայն տոհմիւ և տամբ իւրով. սպասաւորէր աստուածամուխ Գեղարդին և Կենսաբեր Ս. Խաչին, մեծաւ երկիւղիւ: Եւ ահա անցին ազգք զկնի ազանց՝ մինչև յամս 960[6]. և աստուածընկալ Գեղարդն և Կենսաբեր Խաչն սպասաւորէր այլ յայլմէ, ընկալեալ որդիք ի հարց և ի հաւուց, և փոփոխէր տեղաց ի տեղս: Եւ ապա յետ աւուրցս այսոցիկ բազմաց՝ թագաւորեաց ի վերայ Հունաց Ռոմանոս, և չարչարէր»[7]:

Այնուհետև պատմության հեղինակը գրում է, որ այդ ժամանակ մասունքները հանգրվանել էին Լիկանտոնի Կամրջաձոր (Փոքր Հայք) մենաստանում Հայր Հովհաննեսի վանահայրությամբ. «Բայց

[5] Ալիշան, նույն տեղում:

[6] Մեկ այլ բնագրի համաձայն թվականը նշվում է 939:

[7] Ալիշանը ավելացնում է «զանհաւանս Քաղկեդոնի ժողովոյն»: Բյուզանդական Ռոմանոս I և II կայսրերը գահակալել են համապատասխանաբար 920-944 և 959-963 թվերին:

զօրութիւն և համբաւ սքանչելաց Ս. Կենսաբերին տարածէր ընդ կողմանս կողմանս նահանկին այնորիկ, և գային յամենայն գաւառացն, և բժշկէին յիւրաքանչիւր ախտիցն՝ հոգւոց և մարմնոց: Եւ իբրեւ գիտաց Հայրն Հովհանես եթէ թագաւորն Ռոմանոս ոչ միայն զռամիկ մարդիկն նեղէ՝ այլ և զվանականս, խորհեցաւ փախչել յաշխարհէն Յունաց. և մանաւանդ երկեաւ իսկ եթէ կայսրն Ռոմանոս յափշտակեսցէ զՍ. Նշանն և ելեալ տարադէմ աշխարհէն, Լիկանտոնացւոց՝ հանդերձ Ս. Կենսաբերիւն և քառասուն մարդովն, փախստեայ լինէին, և գային հասանէին յաշխարհս Հայոց, ի սահմանս Արշարունեաց նահանկին, որ էր ընդ տէրութեամբ Աբասայ թագաւորի որդւոյ Սմբատայ Տիեզերակալի»[8]:

Աբաս թագավորը ուրախությամբ ընդունում է փախստական հոգևորականներին, հյուրասիրում, ապա տեղեկանալով փախուստի պատճառներին Հայր Հովհաննեսին հուսադրում և առաջարկում է. «...ահա առաջի ձեր են ամենայն աշխարհս իմ, ուր և հաճոյ իցէ ձեզ բնակել՝ լիցի ձեզ տեղին այն, եթէ գիւղ լինի և եթէ բերդ»[9]: Հայր Հովհաննեսը շրջելով Արշարունիքում ընտրում է . «Այս տեղս ունի զնմանութիւն Կամրջաց ձորոյ զոր ունէաք մեք յաշխարհին Լիկանտոնոյ. եկայք եղբարք, շինեսցուք զայս տեղիս:

Եւ ապա ի գործ շինութեանն, և կատարեցին ի պակաս աւուրս, և հաստատեցին եկեղեցի. և բազմեցաւ Ս. Կենսաբերն յառագաստի խորանին, և անուանեցին զանուն վանացն **Կամրջաց ձոր.** և էր թւականն յայնժամ ՅՁԸ (=939): Իսկ բարեպաշտ արքայն Հայոց Աբաս յառաջ քան յայտնութեան պահքն, գայր ի վանքն բազում ընծայիւք, հանդերձ ազատօքն իւրովք և մեծաւ ամբոխիւ. և արարին նաւակատիս Ս. Նշանին. և յայնմ աւուր բազում բժշկութիւնք կատարեցան ի ձեռն սրբոյ Խաչին ի վերայ այսահարաց և զօսացելոց

[8] Այրարատ, էջ 547-8:

[9] Անդ:

և ամենայն ցաւագնելոց. և տեսեալ զսքանչելիսն ամենայն Հայկազանց՝ տային փառս Աստուծոյ»[10]:

Ասողիկ պատմիչը շարադրելով Աբաս Բագրատունու (928-953 թ.թ.) գործունեությունը այլևայլ դեպքերի հետ հաստատելով մեր աղբյուրի տեղեկության հավաստիությունը շարադրում է. «Յայսմ ժամանակի ծաղկեալ պայծառանայր կարգ կրօնաւորական հանդիսից յաշխարհիս Հայոց: Եւ ի յոլով տեղիս շինեցան եղբայրանոցք, և ժողովեցան միաբանակեացք սիրովն Քրիստոսի:

Նախ առաջին՝ մեծահռչակ ուխտն Կամրջաձորոյ ի գաւառին Արշարունեաց, որոյ առաջնորդ Հայր Հովհաննէս, որ հալածեալ յարևմտեայ աշխարհէն յեգերացւոց[11] գաւառէն, ի քաղկեդոնական մարդադաւան աղանդիցն, բերեալ ընդ իւր զհրազէն նշանն[12] տերունական: Եւ ընդ որ անցանէր՝ բազում սքանչելիք և նշանք և բժշկութիւնք լինէին ի ձեռն պատուական խաչին, որպէս և ի մերում ժամանակիս աչոք մերովք տեսանեմք, զի բազում հիւանդք և ախտաժէտք բժշկեցան: Եւ հանապազ կայ և կատարէ զիւր հրաշարգործութիւն»[13]:

[10] Այրարատ, 548:

[11] «յԵգերացւոց գաւառ», մեր կարծիքով այստեղ կա անվան բնագրական աղավաղում, դեռևս XIII դ. ձեռագիրն արտագրողն գրիչի կողմից, որը ամենահին ձեռագիրն է (տես՝ Մատենադարան, ձեռ. 2825, էջ 197 ա): Նախ Եգերաց աշխարհը Սև ծովի արևելյան առափը Ասողիկի կողմից չէր կարող գավառ կոչվեր, երկրորդ՝ եգերացիները հայերիս համար հյուսիսաբնակ են և ոչ թե արևմտյան: Ուստի, նկատի ունենալով, որ Կապադովկիայի տարածքում կա «Էրգիաս լեռ», որը շարադրանքում կտար «Էրգիացւոց» տեղանունը, կարող էր արտագրող գրչի կողմից հասկացվեր «յեգերացւոց գաւառ»: Մեզ զարմանք է պատճառում, որ ոչ Մ. Էմինը և ոչ էլ Ստ. Մալխասյանը ուշադրություն չեն դարձրել այդ հանգամանքին:

[12] «Հրազէն» բառը Մ. Էմինը բնագրական վրիպակ է համարում, քանի որ այն որևէ իմաստ տվյալ ժամանակ չէր կարող ունենալ (հրազեն, հրացան) և ուղղում է "հրաշազէն» ձևով: Ստ. Մալխասյանը համաձայնվում է նրա հետ: Հետևաբար խոսքը հրաշազեն Գեղարդի մասին է: Տես, Անդ, ծանթ. 109, էջ 379:

[13] **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան**, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, գիրք III , գլ. VII, էջ 173-174:

Այնուհետև Ս. Նշանի պատմության հեղինակը շարունակում է մեկ առ մեկ հիշատակել Կամրջաձոր վանքի առաջնորդներին մինչ Ստեփանոս Վարդապետը «զոր Ասղնիկն կոչեն»[14], նաև Դվինի երկրաշարժը, վանքի փլվելը և վերաշինումը: Իսկ XI դարի կեսին. «...ազգն Հագարու յաշխարհս մեր լցին իբրեւ զմարախ բազմութեամբ... Եւ առին Պարսիկքն (պետք է հասկանալ Սելջուկ Թուրքերը) զԿարս և զԿապոյտ և զԿեշրոր և զԿաղզվան, և յայսմ աւուրքս վախճանեցաւ հայր վանացն Ստեփանոս, որ և Ասղնիկ: Եւ իբրեւ գիտացին եղբարքն՝ եթէ Տաճիկքն անխնայ կոտորեն զՔրիստոնեայս, և աւարի առնուն զստացուածս, ամփոփեալ պահեցին զարդս եկեղեցւոյն, զգիրք և զխաչ: Իսկ զԿենսաբեր Ս. Նշանն՝ էդին ի նոր պուտկի (հավանաբար նաև Գեղարդը- Ի. Ղ.) և ծածկեցին զերկրաւ. և է տեղի պահստեան Ս. Կենսաբերին՝ հանդէպ վանացն, ի տեղի Գողգոթայ, յարեւելից հիւսիսոյ. որ մինչեւ ցայսօր լեռնակն այն անուանեալ կոչի Խաչգիւտ: Եւ եկաց նա անդ ամս 177, սպասաւորեալ ի հրեշտակաց. քանզի ուր խաչն է անդ է և խաչեցեալն ի նմա: Եւ իբրեւ շշուկն շատացաւ և ահն հասաւ, ցրուեցան միաբանքն յայլ գաւառս, և վանքն անմարդ և ամայի մնաց»[15]:

Վանքի տարածքում բնակություն են հաստատում այլազգիները, որոնցից Սամսամի կինը երազ է տեսնում և կարգադրում է փորել այդ տեղը. «Յայնժամ զարհուրեալ տիկնոջն առնու ընդ իւր աղջիկ մի առանց առն փորձոյ, և գայ գագաթն բոկ և հետիոտս. և հրամայեաց կուսին առնուլ զՍ. Խաչն՝ հանդերձ անօթովն և բերեալ ի վանքն՝ և եդ յեկեղեցւոջն. և կացոյց զԿոյսն սպասաւոր, լոյս վառել

[14] Ամիշանի կարծիքով Ստեփանոս Ասողիկը, պատմիչ Ստեփանոս Ասողիկն է, որ մահացել է Գագիկ թագավորի Հունաստան տեղափոխվելուց հետո: Գագիկ Բագրատունին կարող է Գագիկ II լինել, կամ Գագիկ Աբասյանը, ուստի Ասողիկի մահը պետք է դնել 1045-1060 թվականներին:

[15] Այրարատ, 548-549:

և խունկս արկանել...», ապա հիշվում են մի քանի վանականներ որ սպասարկել են այն[16]:

Բացի այս պատմությունից, Գեղարդի մասին ընդհուպ XII դարը, գրավոր որևէ այլ հիշատակության չենք հանդիպում, ոչ մեր և ոչ էլ օտար պատմիչների կամ եկեղեցական գործիչների աշխատություններում: Միայն 1119 թվականին գրված «Օրհնութեան նամակում» կա հետևյալ վկայությունը. «Շինեալ է ... ի յերկիրս Վանայ, հանդէպ բերդին յարեւելից կուսէ, ի գիրկս լերինն Վարագայ, ի վերայ ... բլրոյ միոյ ձեռամբ Թադէոսի սրբազան առաքելոյն ... որ եբեր ի Հայս ... զշիշ իւղն և զԳեղարդն աստուածամուխ և զբեւեռսն աստուածահեղուս և զքօղն Տիրամայր սուրբ Աստուածածնին ...:

Գրեալ էր օրհնութեան նամակն օրինակիս ի թուականութեանս Հայոց ԵՃԿԸ (=1119) ամին, երկիրս Վասպուրական, ի մայրաքաղաքս Վան, ընդ հովանեաւ Կարմրաւոր սուրբ Աստուածածնին ...»[17]:

Քառասուն տարի անց նորից է հիշատակվում սբ. Գեղարդը՝ 1159 թվին: Այդ մասին 1768 թվին Պոլսում տպագրված Շարակնոցի Թադեոս առաքյալին և Գևորգ զորավարին նվիրված կանոնների ծանոթագրության մեջ հրատարակիչը տալիս է այս հետաքրքիր ծանոթագրությունը. **«Երկոքին շարականքս այսոքիկ ... այսինքն, սուրբ առաքելոյն Թադէոսի և սրբոյն Գէորքեայ եղեն գտանեցեալ ի հին և եղծեալ շարակնոցէ ումէքէ, որ է գրեալ ի թուին հայոց ի: ՈԸ: (608+551=1159), և վասն այնր եդաք աստ»:** Այնուհետև «Կանոն Թադէոսի առաքելոյն» շարականում կան հետևյալ տողերը.

Այսաւր զԳեղարդն պատուական
Ետ մեզ նշան պահպանութեան՝
Ներկեալ արեամբ կենարարին.
Որով փրկիմք և ամրանամք
Յորոգայթից կրկին որսողաց.
Վասն որոյ մաղթանաւք սորա
Կեցո զմեզ մարդասէր փրկիչ[18]:

Ուսումնասիրող բանասերներից ոմանք Թադէոս առաքյալին նվիրված այս կանոնը վերագրում են XII դարի կեսերի եկեղեցական և մշակութային խոշորագույն գործիչ Ներսես Շնորհալուն:

Միխայել Ասորի պատմիչը (XII դ.) վկայում է հետևյալը. «Եւ Գեղարդն աստուածամուխ պսակաւն փշեայ ի Թադէոսէ բերեալ, և կայ անդէն ի Հայս ի պարծանս ազգին և ի փառս Աստուծոյ»[19], բայց թե որ վանքում է պահվել տվյալ սրբությունը, պատմիչը լռում է: Միայն Վարդան Արևելցին է, (XIII դ.) որ իր «Աշխարհացոյց»-ում որոշակություն է մտցնում այդ հարցում հիշատակելով այսպես. «Իսկ ի կողմն Գառնոյ Դարունից մեծ եկեղեցին է, որ է Հայոց Թառ ... եւ Այրի վանքն, ուր կայ գեղարդն սուրբ աստուածամուխ՝ ներկեալ արեամբ (ն) կենարարին, եւ տախտակն սուրբ տապանին Նոյայ նահապետին, եւ նա է տուն հաւատոյ Հայաստանեայցս՝ հաստատեալ ի սուրբ Լուսաւորչէն»[20]:

---

[16] Ավարտվում է Ս. Խաչի և Գեղարդի պատմությունը, առանց այլ թվական հիշելով, բացի այն որ պուտուկի մեջ հողի տակ պահվել է 177 տարի: Եթե ընդունում ենք, որ սելջուկթուրքերի սպառնալիքի հետևանքով է թաքցվել սրբությունները՝ 1050-60 ական թվերին, 177 գումարելով, ապա կստանանք 1225-1235 թվականին է որ նորից հայտնաբերվում է այն: Այդ հաշվարկը միանգամայն արդարացվում է, ինչպես կտեսնենք, Սբ. Գեղարդը 1260-ական թվերին արդեն հանգրվանել էր Այրիվանքում, ժամանակի ռազմական և պետական նշանավոր գործիչ Պռոշ Խաղբակյանի ջանքերով:

[17] **Գ. Հովսեփյան,** Հիշտակարանք ձեռագրաց, էջ 331-332: Այս վկայությունը հակասություն համարյա չունի նախորդի տեղեկությունների հետ, որովհետև սրանով մի անգամ ևս վերհիշվում է, որ Ս. Գեղարդը Հայաստան բերել է Թադեոս առաքյալը: Իսկ նախորդ պատմության համաձայն, այն մինչև X դարի սկիզբը, պահվում էր Կամրջաձորի Վանքում, որը նույնպես Հայաստան էր, ավելի ստույգ՝ երկրորդ Հայքում:

[18] **Սահակ Վրդ. Ամատունի,** Հին և Նոր պարականոն կամ անվաւեր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 31-32:

[19] Տեառն **Միխայէլի պատրիարքի Ասորւոց,** ժամանակագրութիւն, Յերուսաղէմ, 1870, էջ 600:

[20] Աշխարհացոյց Վարդանայ Վարդապետի, քննական հրատարակութիւն Հայկ Պէրպէրեանի, համեմատութեամբ 24 ձեռագրի եւ տպագրի, Բարիզ, 1960, տող 71-78 (էջ 30):

Պարզվում է, որ խնդրո առարկա Գեղարդը ոչ միայն նշանավոր անցյալ ունեցող սրբություն է համարվել, այլև տարբեր մասունքների հետ պահվել է Այրի Վանքում, որը այդ պատճառով էլ, սկսած XIII դարի կեսերից, ի պատիվ Գեղարդի, կոչվել է նաև Գեղարդավանք: Երջանկահիշատակ Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի խոսքերով ասած. «Գեղարդը արեւելեան Հայոց ամենամեծ սրբութիւններից մէկն է եղել Նոյան տապանի կտորի և Հաւուց Թառի փրկչական պատկերի հետ»[21]: Միաժամանակ հարկ է նկատել, որ Վարդան Արևելցու վերը արտահայտած այդ կարծիքը, Այրի Վանքի նշանակության մասին, ցույց է տալիս նրա վայելած մեծ հռչակն ու հեղինակությունը մյուս վանքերի շարքում: Պատահական չէ, որ մինչև վերջերս ուխտավոր հայ բնակչությունը այցելում է Այրիվանք, տարին երկու անգամ՝ Համբարձման տոնին մատաղ անելով և աշնանամուտին հարգանք մատուցում սբ. Գեղարդին:

Իրոք, որ հենց XIII դարն է Այրի Վանք = Գեղարդավանքի պատմության ամենափառավոր շրջանը: Դրան նպաստեց Խաղբակյան Պռոշ մեծ իշխանը, երբ Այրի Վանքը իր շրջակա լեռներով ու դաշտերով գնեց Զաքարյաններից կանխիկ դրամով: Այդ մասին Գեղարդի մեծ եկեղեցու խորանի աջ կողմի պատին թողնելով ընդարձակ մի վիմագիր ուր մասնավորապես ասվում է. **«Շնորհիւն Աստուծոյ, ես Պռոշ իշխան որդի Վասակայ յազգէ Հաղբակայ, գանձայգին արարի ի տերանց աշխարհիս սուրբ ուխտս Այրիվանք լերամբ եւ դաշտաւ եւ ամենայն կազմութեամբ որ կայր ի սմա, եւ (արար ի աւելուած) ոսկի և արծաթի խաչ եւ պահարանք, սկի (հք եւ բ) ուռվարք և քշոցանի, եւ շինեցի եկեղեցիք եւ կանկնեցի սուրբ նշանաւք եւ յարդարեցի գերեզմանատուն ինձ եւ ազգի իմո յաւիտեան եւ ետու սպասաւորութիւն սրբոցս զիմ հալալ գանձայգին գեղն զՈղջայրբեր, զԲերդաղն եւ :Ժ :Ռ: (10.000) սպիտակ ...»**[22] և այլն: Վիմագիրը փորագրված է 1283 թվականին: Կարծեք թե Պռոշ Խաղբակյանը այս վիմագրով հանրագումարի է բերել իր գործունեությունը և նվիրատվություններն Այրի Վանք = Գեղարդավանքին:

Պռոշ իշխանի կողմից վիմագրում հիշատակված ոսկե և արծաթե խաչերի, մասունքի պահարանների, բուրվառների և քշոցների Այրիվանքին նվիրելու իրական լինելու օգտին վկայում է 1268 թվականով հիշատակագրված, Պռոշ իշխանի անունից պատրաստված սբ. Գեղարդի պահարանը, որ հասել է մեզ, ճիշտ է ոչ իր նախնական անաղարտ տեսքով, այլ վերանորոգված է 1687 թ. Պռոշյան տոհմի շառավիղներից մեկի կողմից, որի մասին խոսք կլինի ստորև:

Պահարանի թիկունքին պահպանվել է 28 տող արձանագրություն հետևյալ բովանդակությամբ.

1. **Ի թվին ՉԺԷ (717+551=1268)**
2. **Այս արփիափայլ նը-**
3. **շան ահաւոր եւ Աստուածային**
4. **զէն անպարտելի, նէրկեալ ար-**
5. **եամբ որդոյն: Սա է աստուածամուխ սուսե-**
6. **ր սուրբ մեծ եւ հզօր սպանիչ վիշա-**
7. **պին, որ, զցօղ անապակն արեանն է-**
8. **հեղ ի փրկութիւն աշխարհի: Այս գեղ-**
9. **արդ աստուածաշուք եւ հիազօր արձան լուս-**
10. **ատու կանգնեալ ի փառս Հայաստան աշխարհի հրափայլ եւ**

[21] Գ. Հովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս - Լիբանան, 1969, էջ 201:

[22] Անդ, էջ 305:

11. Ծաղկանկար արեամբն Քրիստոսի, վառեալ եւ վայելչա-
ցեալ պսակ պար-
12. ծանաց կաթողիկէ եկեղեցւոյ, եւ թագ արքունական
13. ի գլուխ քրիստոնէից: Ուստի ի կամս բարձելոյն
14. զօրինեալ. Ես Պռոշ իշխան որդի Վասակա ար-
15. ժանաւորեալ աստուածազէն սուրբ նիզակիս զարդարեցի
16. զսա պատուական պահարանաւ բարեխօս ինձ ու-
17. նելով յահաւոր ատենին Քրիստոսի եւ մեծաւ յուսով
18. ընծայեցի յիմ գանձագին գերեզմանատունս
19. ի սուրբ ուխտս Այրիվանից, յիշատակ յաւիտենական
20. ինձ եւ զաւակաց իմոց Պապաքին, Ամիր Հասանին
21. եւ Վասակա, եւ կենակցի իմոյ Խութլուխաթունին ի Քրիստոս
22. փոխեցելոյ եւ Մկդեմին եւ Գօհար խաթունին
23. որ կիսօրեայ ելին յաշխարհէ: Յորոց վերա ամենեցուն
24. սոցա կենդանեաց եւ մեռելոց ծագէ շնորհ ո-
25. ղորմութեան Քրիստոսի միշտ եւ հանապազ եւ փոխանակ այ-
26. սմ նիզակի շնորհեսցէ Քրիստոս բարեպաշտ իշխա -
27. նին Պռոշա խորան արեգակնափայլ եւ անճա-
28. ռելի և լուսափառ պսակ կազմեալ ի ձեռն Աստուծոյ[23]:

Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը կարծում է, որ պահարանի արձանագրության հեղինակը պետք է, որ Վարդանը լինի, հիմնավորելով՝ որ այն սովորական արձանագրություն չէ նման դեպքերում գրված, այլ այդ սրբության մեծարանքի և պաշտամունքի բանաստեղծական արտահայտություն է իր սկզբնամասով: Որ Պռոշ իշխանը չէր կարող դրա հեղինակը լինել, այլ նրա մերձավոր անձանցից մեկը, երևում է արձանագրության նաև վերջնամասից: Այս տեսակետը կարելի է հիմնավոր համարել, քանի որ միջին դարերում սովորություն կար ճառեր և շարականներ գրել և երգել սրբերի ու տաճարների նավակատիկների, մասնավորապես այս դեպքում սուրբ Գեղարդի փառավորության՝ պահարանի պատրաստման առիթով: Իսկ որ Վարդանը բարեկամական կապեր պիտի ունենար Պռոշ Խաղբակյանի հետ որևէ կասկածից վեր է: Չէ որ Վարդանը 1268 թ. ավարտում է իր Դանիելի մեկնությունը Աղջոց սբ. Ստեփանոս վանքում, որը հեռու չէր Այրիվանքից և Խաղբակյանների հեղինակավոր հոգևոր կենտրոններից մեկն էր: Կամ 1270 թվին գումարված Զագավանի ժողովի ղեկավարը Վարդանն էր, իսկ նրա հովանավորը՝ Պռոշ իշխանը: Ավելին. միջնադարյան բազմաթիվ շարականների մեջ կա մեկը՝ նվիրված սբ. Գեղարդին, ըստ Սարգիս երեցի նույնպես Վարդանինն է. «Եւ զգեղարդեանն իսկ դու պարծանքդ պարծանաց... Սուրբ Վարդապետին Վարդանա է ասացեալ», որն ունի հետևյալ բովանդակությունը.

Իսկ դու պարծանքդ պարծանաց, Գեղարդ սուրբ և զերազանց,
Որ ձեռամբ Թադէոսի սուրբ և ընտրեալ առաքելոյն
Առաքեցար մեզ ապաւէն՝ հիմն բարեաց հաստատութեան.
Քև զՔրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ:

Թևաւոր սուր երկսայրի և բանալի անճառ շնորհաց.
Ջի դու բացեր զկողն կենաց, ջուր և արիւն արտաբերեալ.
Որով մկրտիմք և հաղորդիմք ի բնակութիւն երրորդութեան.
Քև զՔրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ:

Գեղեցիկ գոյն գովելի ներկեալ արեամբն Քրիստոսի,
Ի փառս ազգիս Հայաստանեաց արձանացար յերկրի մերում.
Աշտարակ բարձր և ամուր, պարիսպ հրեղէն շուրջանակի.
Քև զՔրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ:

Աստուածամուխ սուսերդ սուրբ աստուածախառն զաւրութեամբ,
Որով կտրին արմատք ախտից և ցաւք մեղաց և յանցանաց.

[23] Մնդ, էջ 304:

Քև փրկեսցուք ի փորձանաց և յամենայն որոգայթից.
Քև զՔրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ:
Աստուածաներկ սուրբ փայլածու նիզակ ի ձեռն Յիսուսի,

Որով փախչին փաղազն դիւաց և բնակին գունդք հրեշտակաց.
Քև կնքեսցուք զգայարանս, և զդրոշմեսցուք զմիտս և զհոգիս,
Տալով պատիւ Երրորդութեանն՝ Հաւր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն,
Կենդանութեան և յետ մահու և յանսպառ յաւիտենից:

Գեղապաճոյճ Գեղարդն սուրբ և թարգմանիչ անմահ որդւոյն,
Որով ցուցաւ մարդ և Աստուած ստոյգ մեռեալ և կենդանի.
Յոր հաւատաց հարիւրապետն և վկայեաց Աստուածութեանն.
Քև զՔրիստոս բարեբանեմք, հիմն բարեաց եկեղեցւոյ[24]*:*

Ամենայն հավանականությամբ այս շարականը Վարդան Վարդապետը հորինել է 1260-ական թվականների վերջին Պռոշի կողմից սբ. Գեղարդի համար արծաթյա պահարան պատվիրելու առիթով: Մատենադարանում պահվող ձեռագրերի մեջ կան սբ. Գեղարդի նկարագրությանը նվիրված առանձին հիշատակություններ, որոնցից մեկը դեռևս 1898 թ. հրատարակել է Մեսրոպ Մագիստրոսը «Արարատ» ամսագրում, «Պատմութիւն ս. Գեղարդեանն եւ այլ տնօրինականացն Քրիստոսի» վերնագրով, իսկ մյուսը «Քառակ գիրք» կոչվող ձեռագրի հիշատակարանն է, թվագրված 1221 թվականով, հրատարակել է Գարեգին Հովսեփյանը[25]: Սրանք համարյա նույն բովանդակությունն ունեն առանձին շեղումներով, որը ցանկանում ենք ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

«Սուրբ Վարդապետն հայոց Վարդան յարեւելից առաքեաց ի Հռոմկլայն զայս գիր[26]: Վասն սուրբ և փրկական տնօրինական սրբութեանցն Քրիստոսի Աստուծոյ մերոյ այս գտաւ ի գրոց, զի ոսկի գրով կայր ի գրի գրեալ ի քաղաքն Կոստանդնուպօլիս, որ կոչի թագաւորութիւն: Եւ այսպես պատմեցաւ: (Յորժամ առին զթագաւորութեան քաղաքն՝ մեծ թագաւորն Ֆրանկաց)[27]: Եւ բացեալ զմեծ եկեղեցին Սուրբ Սոփի և մեծաւ պարսաւանօք կոչեր զամենայն քաղաքն և զպատրիարգն և զմեծամեծս քաղաքին և զժառանգաւորս եկեղեցւոյն և խնդրէր զփրկական սրբութիւնս: Եւ նոքա, զոր ունէին, ցուցին, և ապա բերին զմեծ զգրոցին պատմարանն և էր այսպես գրեալ ... (մի առ մի հիշվում են, թե որ սրբությունները որտեղ են գտնվում) ... Այլ կենաց գեղարդն, որ ի կողահոս փրկական աղբեւր արեանն հոսաւ, առեալ Ղունգիանոս, որ կոյրն էր ի ծնէ և տիգախոց կողէն լուսաւորեցաւ (կա ի Գեղարդ)[28]:

Աստուածարեան ներկեալ սուրբ գեղարդն և պսակ փշոցն և Յովսեփա Արեմաթացւոյն աջն և զսուրբ շիշ իւղոյն ազնուի և զԱստուածամօրն պատկերն սուրբ առաքեալն Թադէոս ի Հայք տարաւ: Եւ այս է նշան սուրբ Գեղարդեանն Քրիստոսի, որ տեսանէք և ճանաչէք և բերէք, որ ոչ խաբեն զձեզ նենգաժոտ ազգն Հայոց[29]: Որ թագաւորք սուրբք և աստուածասէրք բերեալ զերկնային պսակն սուրբ հաւատոցն Քրիստոսի և ամենայն սուրբ եկեղեցեացն հռոմայեցոց: Այլ սուրբ գեղարդն Քրիստոսի երկնային գանձ լուսոյ կայ ի յաշխարհն Հայոց և որք տեսանեն զնա՝ ոչ տեսանեն զմահն յաւիտենից՛ [ոչ յամօթ կրեն աւուրն աներեկի][30] և ոչ տեսանեն զՆեռն: Եւ ոչ թագաւորութիւն կայ իմացեալ և պատուեալ, նա ոչ անցանէ թա-

[24] **Սահակ Վրդ. Ամատունի**, Նշվ. աշխ., էջ 130-131:
[25] **Գարեգին Հովսեփեան**, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 815-816:
[26] Արարատում այս նախադասությունը բացակայում է, էջ 226:

[27] Հիշատակարանում բացակայում է: Ինչպես հայտնի է 1204 թ. խաչակիրները տիրեցին Կոստանդնուպոլսին մինչև 1261 թ.: Այդ նկատի ունի հեղինակը:
[28] Հիշատակարանում բացակայում է: Ավելացված է Արարատում, էջ 227:
[29] Արարատ, ունի «Յունաց», էջ 228:
[30] Արարատում բացակայում է այս բառակապակցությունը. էջ 228:

գատրութիւն այնմ աշխարհի: Եւ նմանութիւն սուրբ և աստուածակիր գեղարդեանն այս է[31].

Գմբեթաձեւ ի վեր քաշեալ գլուխ նորա, որպէս նիզակի սուր առեալ և դ (4) մատին չափ է լայնութիւն մէջ նորա և հրեշտակաց ձևեալ, նման խաչի փորեալ և զփորեալ հատուածն անդէն ի յերկուս կողմ երեսաց սուրբ խաչին բեւեռեալ դ (4) բեւեռօք, որպէս զտէրն ի խաչին: Եւ խնծորաթոռ խաչին աղիւսանման վեցկուսի և ի վայր կողմն փող նիզակին ոչ այլ ինչ քանդակմամբ նաշխեալ, այլ ամենեւին անարատ: Այս է (նշան) սուրբ Գեղարդեանն Քրիստոսի:

Այլ Աստուածամօրն պատկերն ի Հոգե[ա]ց[32] վանքն կա՝ յԱղբակայ[33] գաւառին: Եւ շիշ յիտղոյն յերկիրն Տարօնոյ ի վանքն Եղրդի[34]: Արեմաթացոյն աջն ի յԱռբենեան[35] գաւառին ի գեղն, որ Թադէոս Առաքելոյ անուանի: Եւ պսակ փշոցն իւր վէմն[36] կա, ուր նահատակեցաւ առաքեալն սուրբ ի Զարեւանդ գաւառի: Եւ արդ այսպէս օրինակեցաւ տնօրինական սրբութիւն, և օրինակս թարգմանեցաւ ի հոռոմ գրոց ի հայ գիր՝ ի թվին ՌՀ (1221)[37] ամէն: Հայր մեր»[38]:

---

[31] Գեղարդի նկարագրությունը առաջին անգամ է հանդիպում մատենագրության մեջ և լիովին համապատասխանում է այժմ Մայր Տաճարի թանգարանում պահվող օրինակին: Առաջօրինակ այս նկարագրությունը մի շարք անգամներ կրկնվում են տարբեր հեղինակների կողմից համարյա նույնությամբ սկսած XVI դարից, ընդհուպ XIX դարը:

[32] Արարատ, ունի «Հոգոց», էջ 228:

[33] Արարատ, ունի «Ի Թողկաց», անդ:

[34] Արարատ, ունի «Եղեգնի», անդ:

[35] Արարատ, ունի «Ի Առբերան», անդ:

[36] Արարատ, ունի «Վանքն», անդ:

[37] Արարատ, ունի «և բերաւ ի Հայս, յորում էր թիւս ՃՀՋ (=726) Քրիստոսի փառք յափտեանս»: Հրատարակող Մեսրոպ վարդապետն ավելացնում է որ «Զեռագրիս տարեթիւը յայտնի չէ ինչպես նաև գրչի անունը»: Անդ., էջ 428:

[38] Գարեգին Հովսեփյանը տալիս է նաև այս ծանոթագրությունը. «Զեռագիրը ստացել է ոմն Մահդասի Կարապետ՝ ի յիշատակ իւր կողակից Թօվին, որ «Թվին ՌՀԷ (=1628) ամին փոխեցաւ առ Քրիստոս»: Կան ուրիշ Յիշատակարաններ «ՌՁ (=1631), ՌՁԲ (=1633) եւ ՌՂԷ (=1648) թուականներով, նոյն Կարապետ Մահդասու անձի և ընտանիքի հետ կապված» (եր, 330ա -331բ):

Ամենայն հավանականությամբ Մեսրոպ Վարդապետի հրատարակած ձեռագիրը նախագաղափարն է եղել, որից 1221 թվին արտագրվել է Հիշատակարանը, այն վերագրելով Վարդան Արևելցուն և բաց թողնելով կամ ավելացնելով առանձին բառեր և նախադասություններ, աղավաղել տեղանուններ ու առանձին իմաստ հաղորդել, ինչպես օրինակ «նենգաժոտ ազգն Հունացը» փոխարինել «ազգն Հայոց»-ով և այլն:

Այսպիսով, միանգամայն պարզ է դառնում, որ դեռևս XII-XIII դարում բյուզանդական և հայկական եկեղեցիների միջև վեճ էր սկսվել, թե իրական Գեղարդը ո՞ր ժողովրդի սեփականությունն էր: Հետևաբար Հայաստանում գտնվող խնդրո առարկա Գեղարդը չպետք է շփոթել Վատիկանում պահվող նմանատիպ մեկ այլ Գեղարդի հետ: Դեռևս XII- XIII դարերի հայ և օտար ազգի պատմիչները գիտեին նրա գոյության մասին և մանրամասն անդրադառնում են տվյալ խնդրին բացատրելով, թե ինչպես է առաջացել կրկնօրինակ Գեղարդը:

Մասնավորապես, Միխայիլ Ասորի պատրիարքը վկայում է, երբ Զանգի ամիրան պատերազմում հաղթեց Արթուխին և տեր դարձավ սուրբ վայրերին, այդ ժամանակ (XII դար) Հռոմի Պապը այցելում է Երուսաղեմ, իսկ այնտեղից՝ Անտիոք: Տեղի հոգևոր հայրերը նրան են ցույց տալիս Քրիստոսի անունով Գեղարդը: Վերջինս ասաց. «զբուն Գեղարդն Քրիստոսի գիտեմ, եթէ Թադէոս առաքեալն ի Հայք տարաւ. այս ո՞յթ է. և գտաւ պատմութիւն զնմանէ որ գրեալ էր, թէ ազգն Հրէից որ բնակեալ էր ի Տիբերիա՝ յաւուր ուրբաթու խաչելութեանն Տեառն գողացան մանուկ մի և տարան յանապատ, և խաչեցին զնա և փշով պսակեցին և ծիրանի և կարմիր զգեցուցին, և գեղարդեամբ խոցեցին զնա. և զամենայն որպիսութիւն կատականաց Տեառն արարին նմա. նոյնպէս և հրաշք Տեառն մերոյ կատարեցաւ ի վերայ մանկանն զի խաւարեցաւ արեգակն և շարժեցաւ երկիր և պատառեցան վէմք և արիւն և ջուր բղխեաց ի տիգախոց

կողէն ... և այս է գեղարդն այն ուստի լինի ի սմանէ մեծամեծ սքանչելիք. և լուեալ պապուն զգրեալն հաւատաց. և փառատրեաց զԱստուած և երկրպագեաց նմա»[39]: Հավանաբար նման կարգի զրույցի մեկ այլ տարբերակ է, որ դեռևս 1702 թ. հրատարակվել է «Հայելի Վարուց» կոչվող ժողովածուի 334 էջում հետևյալ բովանդակությամբ:

«Պատմեաց մեզ զսուրբն Աթանաս Աղեքսանդրու հայրապետն, թէ ի Բիւրիտոն քաղաք՝ մերձ յԵրուսաղէմ, ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի, բազում հրէայք բնակեալ էին խառն ընդ քրիստոնեայս:

Եւ մի ոմն ի հրէիցն խնդրէր տուն ի վարձու, և առեալ ընդ իւր այլ սիրելիս հրէայս և գնացին գտին տուն մի դատարկ, յորմէ քրիստոնեայք ելեալ էին, և մոռացեալ էին յորմն յարևելից կուսէ կախեալ զտէրունական պատկերն: Եւ յորժամ մտին ի տունն հրէայքն տեսին զպատկերն, և ասէին զմիմեանս, թե՝ «Այս պատկերս գալիլեացւոյն է, և որպէս արարին հարքն մեր ընդ նմա՝ արասցուք և մեք ընդ պատկերս նորա»: Եւ առեալ եղեգն, հարկանէին զգլուխն եղեգամբ, և ծեծէին զծնօտսն, և թքանէին յերեսն, և ծակեցին սրով զձեռսն և զոտսն: Եւ յորժամ խոցեցին զկողն պատկերին, առժամայն էլ արիւն և ջուր: Եվ զայն տեսեալ զահի հարան, և ընթացեալ պատմեցին քահանայապետիցն իւրեանց և այլ հրէիցն: Եւ նոքա փութանակի գնացին ի տունն և տեսին զպատկերն, որ խոցուածոյն բղխէր ջուր և արիւն: Եւ ասեն քահանայապետքն. «փորձեսցուք, եթէ ճշմարիտ է, զոր ասեն քրիստոնայքն»: Եւ հրամայեաց բերել աման և ժողովեաց զարիւնախառն ջուրն. և երթեալ, օծեցին զհիւանդս իւրեանց՝ զկոյրս, զխեղս, զկաղս և զանդամալոյծս: Եւ առժամայն բժշկէին: Եւ միահամուռ ժողովեցան և գնացին առ Եպիսկոպոս քաղաքին և պատմեցին զամենայն եղեալ զսքանչելիս, և յարուցեալ գնացին զհետ նոցա ի տունն: Եւ տեսին զպատկերի երեսն յորպէս զարեգակն պայծառացեալ և դադարեալ բղխումն ի կողից: Եւ առժամայն

[39] **Միխայիլ Ասորի**, էջ 422-423:

ամենայն հրէայքն հաւատացին ի Քրիստոս և մկրտեցան, և ուրախութիւն մեծ եղև քաղաքին յայնմիկ: Եւ նոփրեցին զտունն զայն ժողովրդեանն, զոր և շինեցին եկեղեցի, յորում կայր պատկերն զսքանչելի, և եդին զանունն Ամենափրկիչ...: Եւ յետ բազում ժամանակաց թագաւորն Չմշկիկ գնաց ի Հօմս և էառ զՔրիստոսի պատկերն և հողաթափն պատուական, և եկեալ ի Բիւրիտոն, էառ զպատուական պատկերն զայն և տարեալ ի Կոստանդինուպօլիս, և եդին ընդ սրբութիւնսն ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն»[40]:

Քրիստոսի պատկերի մասին է հիշատակում նաև Մատթէոս Ուռհայեցի պատմիչը մեջբերելով Չմշկիկ կայսեր (969-976 թ.թ.) Աշոտ Բագրատունի Ողորմածին գրած նամակը: Բյուզանդական Կայսրը Պաղեստինում հագարացիների դեմ տարած հաղթանակների առիթով գրում է այսպես.

«Այժմ բովանդակ Փյունիկեն, Պաղեստինն ու Ասորիքը ազատագրվել են տաճկաց հպատակությունից և ընդունել հոռոմոց գերիշխանությունը:... Ահա, իմացիր, որ Աստված քրիստոնյաներին այսպիսի հաղթանակներ պարգևեց, որոնց նմանը դեռ չէր եղել երբեք: Գաբավոն քաղաքում մենք գտանք մեր Քրիստոս -Աստծո հողաթափերը, որոնցով նա շրջեց երկրի վրա, նմանապես և մեր Փրկչի պատկերը, որն անցյալում հրեաները խոցել էին և որից իսկույն արյուն և ջուր էր հոսել. մենք գտանք նաև գեղարդը: Այդ քաղաքում մենք գտանք նաև Կարապետի՝ Հովհաննես Մկրտչի գլխի պատվական մազերը»[41]:

[40] Այս նույնը տես նաև, **Հայելի Վարուց**, աշխատասիրությամբ Քնարիկ Տեր-Դավթյանի. Երևան, 1994, էջ 319-320: Միայն թե վերջինս որոշ ճշգրտումներ է մտցրել տեքստի մեջ որից և մենք սիրահոժար օգտվեցինք: Այդ գրքի ծանոթագրություններից իմանում ենք, որ «Հայելի Վարուց» զրույցների ժողովածուն գրված է եղել լեհերեն, որից էլ XVII դ. կեսերին հայերենի է թարգմանել Սեմեոն Լեհացին և մեզ է հասել բազմաթիվ ձեռագիր և տպագիր օրինակներով:

[41] **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 17-18:

Նույն պատմիչը մեկ այլ առիթով, արդեն 1098 թվականի դեպքերի շարադրանքում գրում է. «Ֆրանկներն սկսեցին տառապել սովից (խոսքը խաչակրաց արշավանքի մասնակիցների մասին է Ի.Դ.), որովհետև քաղաքում հացն արդեն վերջացել էր: Ծայրաստիճան ճարահատեալ, որոշեցին, Կերպողայից անձեռնմխելիության մասին երդում ստանալով, քաղաքը հանձնեն նրան, իսկ իրենք գնան Ֆրանկների երկիրը: Բայց Աստված, տեսնելով նրանց տագնապալի վիճակը, գթաց: Գիշերը նրանց մի սարսափելի տեսիլք երևաց. մի աստվածապաշտ ֆրանկ երազում սուրբ առաքյալ Պետրոսին տեսավ, որն ասաց նրան. «Եկեղեցու ձախ կողմում պահված է այն զենքը, որով անաստված հրեաները Քրիստոսի անարատ կողը խոցեցին. այն գտնվում է խորանի առջև: Հանեք այն և, նրանով մարտի դուրս գալով, կհաղթեք ձեր թշնամիներին, ինչպես Քրիստոսը հաղթեց սատանային»: Նույն տեսիլքը երևաց երկրորդ և երրորդ անգամ: Այդ մասին պատմեցին Կոնդոփրեին, Պեմունդին և բոլոր իշխաններին: Սկսեցին աղոթել և սուրբ Պետրոսի կոչվող եկեղեցու նշված տեղում գտան Քրիստոսի զենքը: ...Այլազգիների զորքերը ողողել էին լայնատարած դաշտը՝ տասնհինգական հոգուց բաղկացած շարքերով: Ջնճիլը Քրիստոսի զենքը բարձրացրեց Կերպողայի դրոշների դեմ: ... Նրանք մեկ մարդու պես երկընքում ցոլացող և լեռներն այրող կրակի պես թափվեցին այլազգիների վրա և ողջ բանակը գլխովին փախուստի մատնեցին: ... Ֆրանկների զորքը անթիվ ավարով ու բազում գերիներով մեծ ուրախությամբ վերադարձավ Անտիոք քաղաքը»[42]:

Հաջորդ 1099 թվականի դեպքերի առիթով պատմիչը շարունակում է. «Այդ տարին կոմս Ջնճիլը Անտիոքում հայտնաբերված Քրիստոսի զենքը տարավ տվեց հոռոմոց կայսր Ալեքսին (1081-1118 թթ.) իսկ ինքը վերադարձավ գնաց Ֆրանկների (երկիրը)»[43]:

[42]Անդ, էջ 174-175:
[43]Անդ, էջ 177:

Այս դեպքերի առիթով է, որ XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցին մասնավորապես գրում է. «Բայց հատուս հատուն նորա Ալեքսի (խոսքը Մանվել կայսրին է վերաբերում 1143-1180) կոմս ոմն եկն յԵրուսաղէմէ յԱնտիոք: Եւ իբրև եմուտ ի տաճար սրբոյն Պետրոսի առաքելոյ և հաղորդ եղև պաշտամանն երևեցաւ նմա սուրբ առաքեալն Պետրոս և ասէ. «Ի պատուհանին եկեղեցւոյդ թաղեալ կայ գեղարդն, որով խոցեցին զփրկիչն մեր, առեալ տարցես յաշխարհն քո»: Եւ նա առեալ խնդութեամբ, եկն ի Կոստանդնուպօլիս: Եւ լուեալ Ալեքսի կայսեր՝ մեծարանս արար նմա յոյժ, և ետ նմա գանձս բազումս, և խնդրեաց ի նմանէ զգեղարդն, և թող առ նմա կոմսն, և գնաց ճանապարհս իւր»[44]: Ամենայն հավանականությամբ նույն դեպքերի նկարագրությանն է վերաբերում Վարդան Արևելցու հետևյալ վկայությունը. «Հինգհարյուր քառասունյոթ (1098) թվին Պաղտույն կոմսն առնում է Թլպաշարն ու Ուռհան: Եվ հաջորդ տարին զորավար Բեկիարուքը գալիս է Անտիոք, փռանգի վրա, նրանցից կոտորում է մոտավորապես ութ բյուր մարդ, քանի որ սուրբ Պետրոսի (եկեղեցու) ձախ կողմում գտնում են այն գեղարդը, որով հրեաները կատակով խոցեցին Փրկչի պատկերը, և այնտեղից դուրս ելավ արյուն ու ջուր, որպես Տիրոջ կողից: Եվ այդ զենքը պատվի է արժանանում որպես աստվածամուխ [Աստծու մեջ մտած] զենք, որը գտնվում է հայերի մոտ: Դրանով հզորանալով Ֆրանկները կոտորում են իրենց թշնամիներին և ապա այն ուղարկում Ալեքսին»[45]:

Մխիթարյան միաբանության հայրերից Մկրտիչ Ավգերյանը սրբերի վարքի յոթերորդ հատորում Ղուկիանոս հարյուրապետին վերաբերող ծանոթության մեջ գրում է. «Իսկ յաղագս աստուածամուխ Գեղարդեանն, զորմէ աւանդութիւն է ազգիս ի Հայաստան լի-

[44] **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 150:
[45] **Վարդան Արևելցի**, Տիեզերական պատմություն, Երևան 2001, էջ 155:

նել՝ բերեալ ի Բարդուղիմեայ (իրականում Թադեոս պիտի լինի Ի.Ղ.) առաքելոյն, բերեն Բոլլանդեանք զաւանդութիւնս արևմտեայց՝ որպէս թէ առ նոսա իցէ, գրելով այսպէս. «Յաղագս Գեղարդեան՝ որով խոցեցաւ կող Փրկչին, որ ոք կամի քաջ խելամուտ լինել ամենայնի, ընթերցցի զՅակոբ Բոսիոս. գիրք Ա (I), ՅՂ (390). յաղթական խաչի. գլ. 17. ուր ճոխագոյն բացատրէ, թէ զիարդ ընդ սուրբ խաչափայտի և ընդ այլ գործեաց չարչարանաց Տեառն յերկիր թաղեցաւ այն ի հրէից, և ընդ նոսին գտաւ ի Հեղինեայ դշխոյէ ի մօրէն մեծին Կոստանդիանոսի: Եւ թե սովոր էր պահիլ այն յայնմհետէ ի գաւթի տաճարի սուրբ գերեզմանին, ուստուցանէ հեղինակ գրոցն՝ որ յաղագս սուրբ տեղեաց, համառօտեալ՝ որպէս կարծի, ի պատուականն Բեթայէ: Անդանօր առ նմին Բոսիոսի մարթ է վերծանել, թէ որպէս նոյն սուրբ Գեղարդն յամի 1118 կամ 1098, սքանչելեոք գտեալ յԱնտիոք՝ սքանչելապէս ազատեաց զայն քաղաք ի սաստիկ պաշարմանէ: Եւ թէ, որպէս նոյնն անկաւ ի ձեռս կայսերն Կոստանդնուպօլսոյ՝ որոյ զսայր նորա խարտոցեալ՝ զառաջինն ետ ի պարգևի մասն ի Վենէտիկեցւոց, և ապա յղեաց ընծայ առ սուրբն Լյուդովիկոս արքայ Գաղղիացւոց[46]: Իսկ մնացեալ երկաթն՝ որ մնաց ի թագաւորական քաղաքին, յառման անդ նորա անկաւ ընդ ձեռամբ կայսերն թուրքաց Մահմէտի երկրորդի, յամի տեառն 1453: Եւ անդ էր մինչև որդի նորա Պայազիտ կամեցեալ ուղերձ ինչ մատուցանել մեծի զօրաւարի գնդին Երուսաղէմացւոց, և զգուշացեալ՝ զի մի թողացուցէ նա, կամ յանձին կալցէ դարձուցանել յետս զեղբայր իւր զվանեալն յիւրմէ պատերազմաւ, զայն սուրբ երկաթն յղեաց առ պապն Ինոնվկենտիոս Ը (8-րդ), յամի 1492, զոր մեծաշուք փառօք ընկալեալ՝ պատուով մեծաւ բերին ի տաճարն Վատիկանու՝ ուր և ցարդ պահի: Զայս ամենայն ասեմ, զորոց ճոխ և անվրէպ ճառէ Բոսիոս, մարթ է ընթեռնուլ առ նմա»: Այլ յասպիսի աւանդութիւնս իւրաքանչիւր ազգ զիւր միտս հաճի»[47]:

Միանգամայն հասկանալի է նման ավանդազրույցի առաջանալու հիմնական դրդապատճառները, առավել ևս, որ հայ և օտար պատմիչները նույնպես անդրադարձել են դրանց և տվել նման զրույցների ծագման իրենց վարկածը: Ինչևէ, վերոշարադրյալից միանգամայն պարզ է, որ հայկական ավանդությունը առավել հին և հիմնավորված է սուրբ Գեղարդի մասին, քան կաթոլիկ եկեղեցունն է: Հայերը իրենց ավանդությունը սկսում են Քրիստոսի ավագ աշակերտ Թադեոս առաքյալից և շարունակական շարադրում են մինչ այսօր, իսկ եվրոպացիներն առավելագույնս 1098 կամ 1118 թվականից, երբ այն իբր գտան Անտիոք քաղաքում և տարան Կոստանդնուպոլիս Ալեքսիոս կայսերը նվեր: Իսկ Բյուզանդիայի անկումից հետո 1492 թվականին նվեր ուղարկվեց Հռոմ: Առավել ևս հաստատվում է պատմիչների վկայությունը, որ Հռոմ տարված գեղարդն այն է, որով հրեաները կատակով խոցեցին փրկչական պատկերը Բիւրիտոն քաղաքում, ինչպես որ վկայում են միջնադարյան հայ և օտար պատմիչներ Միխայել Ասորին, Մատթեոս Ուռհայեցին, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին և ուրիշներ:

Այսպիսով, ի մի բերելով պատմիչների բոլոր վկայությունները, մասնավորապես նկատի առնելով XIII դարի հեղինակ Վարդան Արևելցու արժեքավոր վկայությունը, պարզվում է, որ այն Գեղարդը որով հրեաները կատակով խոցել են Փրկչի պատկերը Բյուրիտոն քաղաքում, պատվի է արժանանում ժամանակակիցների կողմից ու տարվում Անտիոք՝ պահ տրվում սուրբ Պետրոս առաքյալի անվան տաճարին: Իսկ տարիներ անց, երբ խաչակիրների զորքերը շատ նեղն են ընկնում հագարացիների (արաբների) կողմից, Գեղարդը

[46] Լյուդովիկոս արքան սուրբ Գեղարդի իրեն ուղարկած մասի համար պատվիրում է ոսկեզօծ արծաթե պահարան և կախել է տալիս Նյուրենբերգ քաղաքի Սուրբ Հոգուն նվիրված տաճարի առաստաղից:

[47] Հայր **Մկրտիչ Աւգերեանց**, էջ 358, նույնը տես նաև Հով. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Հ-Ա, Էջմիածին, 1842, էջ 57-58:

հանվում է զորքի առաջ և նրանով ոգևորված խաչակիրները փայլուն հաղթանակ են տանում: Հաղթանակը վերագրվում է սբ. Գեղարդի հրաշագործությանը: Այնուհետև խաչակիր կոմսերից Ջնջիլը այն տանում է Կոստանդնուպոլիս և ընծայում Ալեքսիոս Կոմնենոս կայսրին (1081-1118 թ.): Վերջինս այդ գեղարդը բաժանում է երեք մասի, մեկը՝ ուղարկում Վենետիկ, մյուսը՝ Լյուդովիկոս կայսրին, իսկ երրորդը՝ ամենամեծ կտորը պահում իրենց: Բյուզանդական կայսրության անկման պատճառով՝ 1453 թվին, այն քրիստոնեական ուրիշ մասունքների հետ միասին անցնում է թուրքերին, որոնք 1492 թվին այն օգտագործում են դիվանագիտական հաջողություններ ապահովելու նպատակով և ուղարկում Հռոմի պապին, ուր մինչ այժմ այն պահվում է Վատիկանի թանգարանում Քրիստոսին վերագրվող բազմաթիվ այլ մասունքների հետ միասին:

Հետաքրքրական է, որ ողջ XIV դարի ընթացքում, ոչ մի անգամ չի հիշատակվում սբ. Գեղարդը ոչ մի առիթով: Պատճառը հավանաբար դժնդակ ժամանակներն էին, որի հետևանքով անկում էր ապրում Պռոշյան ֆեոդալական երբեմնի հզոր տունը, որի հովանավորության տակ էր գտնվում Այրիվանք - Գեղարդավանքը: Հատկանշական է, որ XIV դարի ընթացքում գրված հայկական ձեռագրերի հիշատակարանների շուրջ 850-ի մեջ գեթ մեկ անգամ չի հիշատակվում Գեղարդավանքը, այնտեղ չի գրվել (կամ մեզ չի հասել) ոչ մի ձեռագիր: Ուստի որևէ տեղեկություն չունենք Գեղարդի մասին:

Միայն XV դարի սկզբին նորից հիշատակություն կա Գեղարդի մասին: Մասնավորապես 1429 թվին գրիչ Գրիգորի կողմից Գառնո գավառի Մանվելի անունը կրող անապատում արտագրված «Մանրուսմունք» կոչվող ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Արդ, յանդ եղեալ աւարտեցաւ հոգիարբուխ Մանրուսմունս, որ կոչի տետր, ի գաւառս Գառնոյ, ի յանապատս, որ կոչի Մանուէլի, **որ է ի սիրտս լերինս Այրիվանուց, յորում բազմեալ կայ Գեղարդն աստուածամուխ,** ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, ...: Արդ, գրեցաւ ի թվականութեանս Հայոց ՊՀԸ (=1429) ձեռամբ յոգնամեղ և փցուն վարդապետիս Գրիգորի, ի դառն և յանբարի ժամանակի, զոր փախստական եկաք ի յանապատս, և ամիս երկու մնացաք ի տեղ: Եւ մենարանիս հայրն իւր միաբանաւ ծառայութիւն ոչ սակաւ արարին, զի բազում աշխատանք կրեցին ի վերայ մեր և խնդրեցին զայս Մանրուսմունքս...»[48]:

Հաջորդ հիշատակությունը Գեղարդի մասին պատկանում է XV դարի մշակութային խոշոր դեմքերից մեկին՝ Թովմա Մեծոփեցու գրչին: Պատմագիրը, որ Մեծոփա վանքի առաջնորդն էր Էջմիածնում Հայոց կաթողիկոսությունը Սսից Արևելյան Հայաստան՝ Էջմիածին տեղափոխելու առիթով 1441 թ. գումարված ժողովի մասնակիցը, իր ճանապարհորդության մասին գրում է. «Եւ ապա ուրախութեամբ մեծաւ և աներկբայ յուսադրութեամբ ելեալ գնացաք յամենալից եւ օրհնեալ գաւառն ի Դարօնս (Հին Բայազետ), եւ յՈտն Մասեաց ի յԱկոռի եւ անտի մտաք ի կենդանաթաղ գերեզմանն Լուսաւորչին ի սուրբ Վիրապն, և անտի յերկրպագութիւն սուրբ Գեղարդեանն (որը Այրիվանքում էր -Ի.Ղ.) եւ սկզբնատիպ Պատկերի Մարդեղութեանն Քրիստոսի: Եւ պատահեալ դիպեցաք մեծ վարդապետին մերոյ՝ եւ առեալ եկաք ի գյուղաքաղաքն Երեւան»:

Ղևոնդ Ալիշանը Այրարատում մեջ է բերում 1441 թվին Շարականի գրիչ Մատթեի հիշտաակարանը գրում է. «... Ի սուրբ և գերահռչակ յականաւոր և ի մեծահանդէս սուրբ Ուխտս Այրիվանքս, **ի սկիզբն և ի մայրն ամենայն վանորայից, ընդ հովանեաւ սքանչելագործ Տիգին և արեամբ ներկեալ անմահին Յիսուսի սուրբ Գեղարդեանն, և այլ բազմութեան Սրբոցս,** և սրբասէր եղբարցս», այնուհետև թվարկում է ութ անձանց անուններ որ բարին հիշեն նրանց[49]:

[48]ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Ա, էջ 391:
[49]Այրարատ, էջ 346:

Ընդամենը սրանից երեք տարի անց, արտագրված Յայսմավուրքի հիշատակարանում կարդում ենք. «Արդ գրեցաւ օրինակ սորին ի թուաբերութեանն հայկազեան տոմարի ՊՂԳ (=1444), ...ի մենաստան Այրիվան, ընդ հովանեաւ հրաշափառ սուրբ լուսոյ մօր կաթողիկէ սուրբ Աստուածածնին, ներկեալ արեամբ կենարարին սուրբ Գեղարդեանն, և ամենայն սրբոցն, որ անդ հաւաքեալ կան»: Ապա հիշատակում է Սիմէոն ռաբունապետին նրան անվանելով «մեծ վարժապետն Հայոց զՍիմէոն, որ յայնմ ժամանակի փայլէր ի մէջ եկեղեցւոյ իբրև զարեգակն, և մեծաւ յուսով և եռափափագ սիրով սկսաւ նորոգել և զարդարել զվանորայս Արարատեան նահանգիս, որ խախտեալ կային ի սահմանաց և ի կրօնից յառաջին հարցն: ... դարձեալ եկն բնակեցաւ ի մեծափառ սուրբ ուխտն յԱյրիվանս,...»[50]: Կնշանակի XV դարի առաջին կեսին Այրիվանք-Գեղարդավանքը Արևելյան Հայաստանի վանքերի շարքում դեռևս շարունակում էր պահպանել իր ուրույն տեղը, նույնիսկ համարվում էր մնացյալ բոլոր վանքերի «սկիզբն ի մայրն ամենայն վանորայից», ուր իրենց համար ժամանակավոր բնակության վայր էին ընտրում հռչակավոր ուսուցչապետեր՝ ինչպիսին էր տվյալ դարաշրջանում նշանավոր Սիմեոն ռաբունապետն իր աշակերտներով հանդերձ: Իսկ վերջինս հայտնի էր առաքելական կրոնի սպասավորների վարքի ու կենցաղի անաղարտ պահպանելու ջատագով՝ հանդիմանում վերջիններիս նրանց թույլ տված վրիպումների ու զանցանքների համար, ինչպես վկայում է Յայսմավուրքի հիշատակարանագիրը:

1452 թվականին Այրիվանքում գրվում է Շարակնոց, որի գրիչ Մատթեոսը գրում է. «Արդ, եղև աւարտ գոչութեան այսմ մեծահանդէս ոսկիազարդ և հոգելից տառիս ի շրջագայութեան հայկազեան տոմարի ՋԱ (=1452), ի դառն և ի չար ժամանակի, որով նեղիմք ի բռնութենէ անօրինաց: Ի հայրապետութեան տէր Գրիգորի՝ յառաքելական աթոռն ի սուրբ Էջմիածինն, որ ի սկիզբն և ի մայր ամենայն վանորայից, ընդ հովանեաւ լուսոյ մաւր սուրբ Աստուածածնիս, և արեամբ ներկեալ անմահին Քրիստոսի սուրբ Գեղարդեանս, և այլ սրբոցս, որ աստ հաւաքեալ կան. ձեռամբ ամենամեղ և փցուն գրչի Մատթէոսի, որ զանունս միայն ունիմ կրօնաւորի , ի խնդրոյ և յարդեանցս երիցս երանելոյ Դանիէլ կրօնաւորի»[51]:

Ընդամենը վեց տարի անց, նույն Այրիվանքում արտագրած Մաշտոցի գրիչ և ծաղկող Հովհաննեսը համարյա նույն խոսքերով է բնութագրում վանքը և նրա սրբությունները. «Փառք... որ ետ կարողութիւն անարհեստ և **փցուն գրչի հասանել ի վերջին գիծ աստուածաբողբոջ տառիս**, որ կոչի յանուն սուրբ հայրապետին Մաշտոցի. ի թուաբերութեանս հայկազեան տոմարիս ՋԷ (=1458), ձեռամբ յոգնամեղ և փցուն գրչի Յոհանէս սուտանուն աբեղայի, որ զանունս միայն ունիմ և ոչ զգործս, **ի վանքս որ կոչի Յայրիվանս, սուրբ տիգիս՝ աստուածամուխ սուրբ Գեղարդեանս, և այլ բազմագումար սրբոցս, որ աստ կան հաւաքեալ...»**[52]:

Հաջորդ տարին մեզ արդեն հայտնի Մատթեոս գրիչը արտագրում է Այրիվանքում մի ճաշոց, իսկ Ստեփանոսը ծաղկազարդում է այն. «Արդ գրեցաւ սա ի յերկնահանգէտ և ի գերահռչակ սուրբ ուխտս Այրիվանս վերածայնելոյ, ընդ հովանեաւ մաւրս լուսոյ սուրբ Աստուածածնիս, և հրաշափառ և երկնանման Կաթուղիկէիս, և **աստուածընկալ սուրբ Նշանացս, և արեամբ ներկեալ անմահին Յիսուսի սուրբ Գեղարդանս, և սուրբ աջերոյս՝ Յովհաննու Մկրտչին՝ ձեռնադրողին Քրիստոսի և սուրբ աջոյն Բարդողիմէոսի առաքելոյն, և յամաւրէն ամենայն սրբոցս, որ աստ կան** հաւաքեալ աւժանդակութեամբ հոգւոյն սրբոյ և կամակցութեամբ սուրբ եղբարցս»[53]: Հետաքրքիր է, որ մինչ այդ, եթե որպես նշանավոր սրբություն հի-

[50] ԺԵ, մասն Ա, էջ 560-561:

[51] ԺԵ, մասն Բ, էջ 15:

[52] ԺԵ, մասն Բ, էջ 99:

[53] Անդ, էջ 120:

շատակվում էր միայն Գեղարդը, իսկ մյուս սրբությունները հավաքական անունով, ապա այս դեպքում հիշատակվում են նաև նշանավոր նոր սրբություններ, որ մինչ այդ չեն հիշվում: Կնշանակի թեև Հայաստանը ապրում էր քոչվոր անասնապահ Աղ-Կոյունլու և Կարա-Կոյոնլու ցեղերի անընդհատ կրկնվող ավարառությունների ժամանակաշրջան, այնուամենայնիվ, Այրիվանք-Գեղարդավանքի միաբանությունը ծաղկում էր թե՛ տնտեսապես և թե՛ վանքում հավաքված նշանավոր սրբություններով, որը հնարավոր էր ձեռք բերել լուրջ գումարներ վճարելով ու մեծամեծ ջանքեր գործադրելով:

Պատահական չի կարող դիտվել շուրջ քսան տարի անց արտագրված Ավետարանի գրիչ Ստեփանոսի հետևյալ վկայությունը. «Արդ, ես անարժանս և յոգնամեղ և փծուն և անարհեստ գրիչ Ստեփանոս սկսեալ գծագրել ի վանս հրաշալի Այրիվանս, ընդ հովանեաւ սուրբ և հրաշափառ Կաթուղիկէիս, և **ներկեալ արեամբն Քրիստոսի սուրբ Գեղարդեանս, որ շնորհաբաշխ սուրբ աջոյս Յովհաննու Մկրտչի, և այլ բազում և անթիւ սուրբ նշանացս, որ աստ կան հաւաքեալ,** ...ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Հոհաննէս եպիսկոպոսի, և եղբաւր նորին տէր Ստեփանոս նորընծա եպիսկոպոսի, ...: Գրեցաւ ի թվականիս Հայկազեան տաւմարի Ջ և ԻԵ (=1476)»[54]:

Հաջորդ տասնամյակում շարունակվում է նոր սրբությունների հավաքումը: Այդ է վկայում 1488 թվին արտագրված Յայսմավուրքի հիշատակարանը. «Արդ, եղև զրաւ գրչութեան սորա՝ այս մեծահանդէս ծաղկազարդ և հոգելից տառի, ի շրջագայութեան հայկազեան տաւմարի ՋԼԷ (=1488), ի դառն և ի չար ժամանակի, որով նեղիմք ի բռնութենէ անաւրինաց, յանիրօ պահանջողաց: ...Ի սուրբ և ի գերահռչակ ուխտս որ կոչի Այրիվանս, որ և հիմնարկեալ է ի սուրբ Լուսաւորչէն Գրիգորի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, և արեամբ ներկեալ Քրիստոսի սուրբ Գեղարդեանս, և սուրբ աջոյս Յովաննու, **և Խոտակերաց սուրբ Նշանիս, և տապանակի սուրբ Յակոբին** և այլ բազմահաւաք սրբութեանցս, յառաջնորդութեամբ տեղոյս իմոյ անարժանութեանս՝ Յոհանէս եպիսկոպոսի, և հարազատ իմոյ՝ գեղեցկատիպ մանկանս տէր Ստեփանոս եպիսկոպոսի,...»[55]: Ինչպես նկատելի է, Այրիվանք-Գեղարդավանքում պահվող սրբությունների շարքին ավելանում է Պռոշյան տոհմին պատկանող հեղինակավոր սրբություններից մյուսը՝ Խոտակերաց սուրբ Նշանը, որի համար արծաթե հիանալի պահարան էր պատվիրել Պռոշի թոռ Ամիր Հասանի որդի՝ Էաչեն դեռևս 1300 թվին:

Խոտակերաց վանքը, որը գտնվում էր Վայոց ձորի Նորավանքից ոչ հեռու, ժամանակակից Խաչիկ գյուղի մոտ, ամենայն հավանականությամբ անկում էր ապրել, կամ լուրջ պարտքերի տակ ընկել, որ ստիպված էր զիջելու ս. Նշանը Այրիվանքին:

Իսկ մի քանի տարի անց Այրիվանքում արտագրված Ավետարանի գրիչը հիշտակարանում ավելացնում է. «Գրեցաւ ... ի հրաշալի Այրիվանս, ընդ հովանեաւ սուրբ և հրաշափառ և շնորհաբաշխ աջոյն Յովաննու Մկրտչին և սուրբ Յակոբ բարեխաւսի, զոր բերեալ հրեշտակն ի Նոյան տապանէն, և այլ բազում սուրբ նշանացս, որ աստ կան: Գրեցաւ լուսազարդ մատեան ի թվ. Հայոց Ջ և ԽԲ (=1493), ...: Գրեցաւ ձեռամբ Ստեփանի ... և առաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Յովանիսի և եղբաւր նորին տէր Ստեփանոսի, որ ... ի նոյն ամի փոխեցաւ ի Քրիստոս, և յառաջնորդ նոցին տէր Բարսեղ եպիսկոպոսի, որ է թոռն մեծին Պռաւշայ»[56]:

Հետաքրքիր է, որ վերջին հարյուրամյակի ընթացքում առաջին անգամ է, ինչ վանքի սրբությունների մեջ առաջինը չի հիշատակվում սբ. Գեղարդը: Հիշտակվում է Բարսեղ եպսիկոպոսը, որը Պռո-

[54] Անդ, էջ 397-398:

[55] ԺԵ, Մաս Գ, էջ 109:

[56] Անդ, 194:

շի թոռ է համարվում, այսինքն այդ տոհմի շառավիղ, քանի որ շուրջ 200 տարի անց չէր կարող Պռոշի թոռը լինել: Կնշանակի Պռոշյան ֆեոդալական տան ներկայացուցիչները դեռևս շարունակում էին տիրել իրենց հայրենական կալվածքներին և համարվում էին տվյալ տարածքի խոշորագույն վանքերի առաջնորդներ:

XVI դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները դժբախտաբար չի հրատարակվել, իսկ Մատենադարանում մեծ մասշտաբի նորոգում է ընթանում, որը հնարավորություն չի տալիս ծանոթանալու ձեռագրի հիշատակարաններին և պարզելու արդյոք սբ. Գեղարդը շարունակում էր հիշատակվել Այրիվանքի սրբությունների շարքում:

Տեղին է անդրադառնալ այն հանգամանքին, որ Հով. Շահխաթունյանցը XIX դ. առաջին կեսին իր հանրահայտ աշխատությունում այսպես է գրում. «Այլ զի երբեմն երբեմն պահէին կաթողիկոսունք Աթոռոյ Էջմիածնի զայս սուրբ Գեղարդ ի Տաճարիս այսմիկ մեծի Կաթուղիկէի առ ինքեանս ...: Քանզի յինչ ինչ կոնդակս Կաթուղիկոսաց յիշատակի ընդ այլ սրբութեանց եղելոց յԱթոռ այսր և Գեղարդն սուրբ ներկեալն արեամբ Յիսուսի: Յառաջին կոնդակի գրեալ ի թուին հայոց ՋԱ (=1452), ի Ա (1) դեկտեմբերի ի Գրիգոր Ժ կաթողիկոսէ: Յերկրորդ ումն գրեալ ի թուին հայոց ՋԾԳ (=1504), ի ԻԴ (=25) նավասարդի յԵղիշայէ Բ կաթողիկոսէ: Յերրորդումն գրեալ ի թուին հայոց ՋՂ (=1541), ի Գրիգորէ ԺԱ կաթողիկոսէ: Եւ ի չորրորդումն գրեալ ի թուին հայոց ՌԺԲ (=1563) ի Միքայել կաթուղիկոսէ Սեբաստացւոյ: Իսկական օրինակք այսոցիկ կոնդակաց գտանի ընդ այլ հնութեանց ի վանս Ստեփաննոսի նախավկայի՝ որ ի ձորն Հին Ջուղայու առ Մազարթայ լերամբ»[57]:

Այս վկայության հավաստիությունը թողնելով Հով. Շահխաթունյանցի խղճին, այնուամենայնիվ արձանագրենք, որ համենայն դեպս 1452 թ. Գրիգոր X կաթողիկոսի կոնդակի հավաստիությունը սբ. Գեղարդի մասին, որ գտնվել է Էջմիածնի վանքում, հավանաբար, անվավեր է: Մենք արդեն հիշատակել ենք 1441, 1444, 1447, 1452, 1458, 1459 և հետագա տարիներին սբ. Գեղարդը գտնվում էր Այրիվանք-Գեղարդավանքում, որի մասին բազմիցս վկայում են թե տվյալ վանքի առաջնորդները, թե՛ այնտեղ ձեռագիր արտագրող գրիչները և թե վանքը այցելած հեղինակավոր անձինք: Հետևաբար անվավեր է այն պնդումը, թե 1452 թ. Գեղարդը գտնվում էր Էջմիածնում: Ամենայն հավանականությամբ այդ տարիներին Էջմիածնի նորահաստատ (1441 թ.) կաթողիկոսության գահակալները հեղինակավոր դարձնելու համար իրենց դիրքը, սբ. Գրիգոր Լուսավորչի աջի և մյուս մասունքների թվում հիշատակել են նաև սբ. Գեղարդը: Հետագա՝ XVI դարի վկայությունները հնարավորություն չունենք ստուգելու: Բայց փաստն այն է, որ XVII դարի ընթացքում Գեղարդը գտնվում էր Այրիվանքում, ինչի իսկությանը կհամոզվենք ստորև:

XVII դ. առաջին տասնամյակը հայ ժողովրդի համար օրհասական տարիներ էին: Շահ Աբասը, 1604 թ. խախտելով թուրքերի հետ կնքած պայմանագիրը մեծաքանակ բանակով անցավ Արաքսը, գրավեց Հին Ջուղան, ապա պաշարեց Երևանը: Նրա բանակի մի մասը ավերեց Արարատյան դաշտի, Շիրակի, Բասենի և Երզրումի կարևորագույն ռազմական և տնտեսական հենակետերը:

Գեղարքունիքում, նույն թվականին ճառընտիրի նորոգող ու կազմող Հովաննես Վարագեցին գրում է. «Աստուածաբան սբ. աւետարանիչդ Ղուկաս քոյին սբ. և արժանաւոր աղաւթիւքդ բարեխաւս լեր առ Քրիստոս, վասն բազմամեղ Վարագեցի Յովանէս բանի խնդրողի, կապողի և կազմողի այս սբ. մատենիս թվին ՌԾԳ (=1604), ի սբ. ուխտս Այրիվանք, ընդ հովանեաւ գեղեցկաշէն Ս. Աստուածածնի տաճարիս և այլ բազմահաւաք սրբոցս: Եւ զի յայսմ ա-

[57]Անդ, էջ 53-54:

մի եկն կարմիր գլուխն՝ շահ Աբազն ի վերայ Երևանայ բերդին և էառ զնա բազում ջանիւք»[58]:

Սրան հաջորդում է թուրքական մեծ բանակի արշավանքը Էրզրումից Արարատյան դաշտ: Պարսկական բանակը ստիպված նահանջում է իր հետ տանելով Արևելյան Հայաստանի բնակչության մեծ մասին: Շահ Աբասի 1605 թվականի օգտոստոսի այդ մեծ «սուրգունի» ժամանակ տեղահանման է ենթարկվում նաև Գառնո ձորի բնակչությունը, որոնց թվում՝ Գեղարդավանքի միաբանները: Ժամանակի պատմիչ Առաքել Դավրիժեցին շատ մանրամասն է նկարագրում վանքի միաբանների հետ պատահածը: Ըստ պատմիչի բոլորին կամ սպանեցին, կամ գերի տարան: Բայց հետագա վկայություններից պարզվում է, որ Այրիվանք-Գեղարդավանքի միաբաններից, այնուամենայնիվ, ոմանք փրկվել են և շարունակում են իրենց գոյությունը վերոհիշյալ մենաստանում: Այդ է վկայում 1610 թ. Մելիքսեդեկ կաթողիկոսի կոնդակում Գեղարդավանքի առաջնորդ Աստվածատուր եպիսկոպոսի անվան հիշատակումը: Վանքի սրբությունները հավանաբար հասցրել էին թաքցնել շրջակա այրերից մեկում, քանի որ հետագայում դրանք բոլորն էլ նորից համարվում են Այրիվանքի սեփականություն:

Հետաքրքիր է այն իրողությունը, որ այս շրջանում վանքում արտագրված ձեռագրերի գրիչները իրենց հիշատակարաններում կարծեք թե մոռացության են տալիս նախորդ դարերում սովորություն դարձած այն երևույթը, որ մեկիկ - մեկիկ թվարկվում էր այս կամ այն հոգևոր կենտրոնում պահվող մասունքները: Այժմ հավաքական իմաստով են օգտագործում « և այլ բազմահաւաք սրբոցս» դարձվածքը: Այդ է պատճառը, որ կարծեք մոռացության շղարշով է պատվում այն հարցը, թե որտեղ էր պահվում Արևելահայոց ամենամեծ սրբությունների մեկը՝ սբ. Գեղարդը: Նույնիսկ տվյալ դարի

[58] Ժէ. Դ-Ա, էջ 131:

նշանավոր պատմիչներ՝ Առաքել Դավրիժեցին և Զաքարիա Քանաքեռցին, ոչ մի առիթով չեն հիշում խնդրո առարկա Գեղարդի գտնվելու վայրը:

Այնուհետ միայն Հայաստան այցելող օտար ճանապարհորդներն են ուշադրություն դարձնում առանձին մասունքների ուր գտնվելուն: Մասնավորապես 1655 թվին Եվրոպացի ճանապարհորդներից Ֆրանսիացի Տավեռնիեն լինելով Երևանում այցելում է Գեղարդավանք: Այդ մասին գրում է. «Այս մենաստաններից մեկը ամբողջովին փորված է ժայռի մեջ իր եկեղեցով հանդերձ, որն իր հերթին գտնվում է մի ամուր ժայռի վրա: Հայերը այս եկեղեցին իրենց լեզվով կոչում են Գեղարդ, ...: **Ահա հենց այդ եկեղեցում է, որ պահվում է հայերի մասունքն՝ երկաթե նիզակը,** որով խոցվել է Հիսուս Քրիստոսը, և այն ցույց են տալիս բոլոր նրանց ովքեր այցելում են այդ եկեղեցին[59]»: Հեղինակը նույնիսկ Գեղարդի գրչագիրը զետեղել է աշխատության մեջ:

Միայն նույն դարի վերջում է առիթ ներկայանում որ ժամանակի հայ գործիչները նորից անդրադառնան Գեղարդի գոյությանը: Այն կապված է 1679 թ. Երևանի և նրա շրջակայքի ահավոր ավերիչ երկրաշարժի նկարագրության և նրա հետևանքները վերացնելու ջանքերի հետ: Երկրաշարժի ճիշտ օրը և ժամը հայտնում է Յայսմավուրքի հիշատակարանի հեղինակ Սուքիաս քահանան. «Ի թուաբերութեան Հայոց ՌՃԻԸ (=1679) յունիս ամսոյ Դ (4), յաւուր չորեքշաբթի մինչ ոչ էր հասարակել օրն»: Երկրաշարժից ավերվում են այլոց թվում նաև «Գեղարդի վանքը եւ Աղջոց վանքն և Ամենափրկչի վանքն (Հավուց Թառ), եւ Տրդատայ թախտն (Գառնիի տաճարը), եւ Խոր Վիրապա Աստուածածնա եկեղեցին հիմնահատակ աւերեցան»[60]: Երկրաշարժին ականատես հիշատակարանի հեղինակը Գեղարդավանքի ավերումը այսպես է նկարագրում.

[59] Ֆրանսերեն բնագիրը տես՝ , Արարատ, 346, ծանոթ:
[60] Մանրամասն , տես, Զաքարիա Քանաքեռցի, Դ-2, էջ 104-107:

«Իսկ զձորակն Այրէվանից առաւել եղեւ աւերումն եւ քակտումն. Վասն զի ամենայն շինուածք ի մէջ խոր ձորի եւ շուրջ բոլորաւն վէմք ահագին, եւ յորժամ շարժեաց շուրջանակի, թաւալեցան ամենայն դիմաց եւ լցան վանքն ամենայն մինչ զի ոչ երեւէր նշմարանք շինութեան, բայց միայն կուտակս քարի երեւէր. որք տեսողացն զարհուրեալ դողացին. Ըռահք և ճանապարհք ամենայն խափանեցան. եւ թէ կամէին կերակուրս հոգէպահս տանիլ, յուսով եւ թիկամբ բարձեալ աբսիթերս գնային վասն զի կարի դժուարացեալ էր, եւ ամենայն կահիւք պակասեալ, ոչ գոյր տեղի աղօթից եւ ոչ տեղի բնակութեանց մարդկան, բայց քարակառկառ միայն, եւ ոչ մնաց քար ի վերա քարի, ոչ ի յեկեղեցիսն եւ ոչ ի յայլ շինուածս...»[61]: Վանքի առաջնորդ Ստեփանոս վարդապետը, որը ի դեպ Պռոշյան տոհմի շառավիղներից էր, երկրաշարժի պահին գտնվել է մայրաքաղաք Երևանում՝ Անապատի եկեղեցում: Վերջինիս փլվելու հետևանքով շատերի թվում զոհվում է նաև Այրիվանք-Գեղարդավանքի առաջնորդը:

Երկրաշարժից երեք տարի անց, 1682 թ. Եղիազար Կաթողիկոսի կողմից Գեղարդավանքի առաջնորդությունը և Վարդապետական գավազան է ստանում նույն վանքի նախկին առաջնորդներ Մեծ Դավթի և Ստեփանոսի եղբոր որդի՝ Կրտսեր Դավիթը: Վերջինս իր տոհմին բնորոշ ջանասիրությամբ, շատ կարճ ժամանակում փակում է իր նախորդի ունեցած 50 թուման պարտքը, այնուհետև ձեռնարկում Գեղարդավանքի նորոգման գործը, որը ականատես Երեմիա քահանան , որ ի դեպ իր կրթությունը ստացել էր մինչ երկրաշարժը Այրիվանքում գործող դպրոցում՝ տեր Զաքարիայի մոտ, 1684 թ. Նորագավթում արտագրած Յայսմավուրքում գրում է. «Յայնժամ մտեալ եղեւ ի մէջ շինութեան (Դավիթ կրտսերը) աներկիւղ եւ անկասկած, իբրեւ զքաջ պատերազմող թագաւոր որ ոչ երկնչի ի պատերազմէ, եւ ինքն վարէ զխումբս պատերազմի. նոյն

[61] Հովսեփյան, Հավելված Բ-39, Ալիշան, 348:

գունակ ընդվզեալ եմուտ ի խախտեալ եւ ի փլեալ տանս նորոգման. արար եւ սկսեալ շրջապատ բարձրաբերձ պարիսպ. տաշեալ քարով, հաստատուն եւ ամուր, պինդ. նաեւ շինուածք բոլորակի, թանապայք, քօղք, ապարանք, սենեակք, խոհարանոցք եւ այլ ամենայն շտեմարանք, տաշեալ քարով, կրով եւ թաղով, մինչ տեսողացն հիացելք: **Շինեաց զտուփ ղութի արծաթէ, պահարանս աստուածամուխ Գեղարդի նշանի, եւ ակամբք պատուականօք յօրինել ետ, եւ ոսկւով գրեաց. բազում ծախս գնա, մինչ ի Իե (=25) թուման, աւելի եւ ոչ պակաս»**[62]:

Այս վկայությունը միանգամայն համապատասխանում է իրականությանը, և ոչ մի գունազարդում չկա: Հավանաբար ավերիչ երկրաշարժի ժամանակ վնասվել էր նաև Պռոշ իշխանի կողմից 1268 թ. պատվիրված սբ. Գեղարդի մասնատուփը, որի մասին արդեն հիշատակել ենք: Այդ էր պատճառը, որ վանքի առաջնորդ Դավիթ Բ., որը ինչպես նկատեցինք նույնպես Պռոշյան տոհմի շառավիղներից մեկի՝ Ինանիկի որդին էր, 1687 թվին նորոգել է տալիս այդ պահարանը, որի թիկունքին պահպանելով Պռոշի կողմից թողած արձանագրությունը նույնությամբ, ավելացնում է մեկ այլ արձանագրություն որպես շարունակություն նախորդի հետևյալ բովանդակությամբ:.

29. «Իսկ ի թվին ՌՃԼ եւ Զ-ին (=1687), ես Դաւիթ Վարդապետ
30. առաջնորդ ս[ուր]բ ուխտիս Այրիվանից յազգ-
31. էն Խաղբակա եւ Պռոշա, որդի Ինանիկին ե-
32. տու նորոգել զպահարան ս[ուր]բ Գեղարդա առա-
33. ւել պայծառ քան զառաջինն սակս յուսոյն
34. զոր առ Ք[րիստո]ս յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց եւ
35. հօրեղբարցն իմոց Դաւիթ ե[պիսկոպո]սին եւ Ստեփան-

[62] Այրարատ, 348, Հովսեփյան, Հավելվ. -39:

36. նոս վարդապետին հանգուցելոց ի Ք[րիստո]ս եւ
37. եղբարցն իմոց Բեկ Ասորին, Կիրակոսին եւ քեռն ի-
38 մոյ Մարիամու յորոց առհասարակ կենդանեաց եւ մեռ-
39. ելոց ամենեցուն ողորմեսցի: Եւ կազմողի սորի-
40. ն Գրիգորի եւ Սարգսի»[63]:

Դավիթ Բ. կողմից պատրաստված, կամ նորոգվածը Գեղարդի պահարանն է, որ այժմ պահվում է Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանում և ունի հետևյալ տեսքը. «Ի կերպ աղիւսակի, ունելով դրունս երկբացիկս» ինչպես նման պահարանները նկարագրում է Ստեփանոս Օրբելյանը նկատի ունենալով նաև իր կողմից Տաթևի վանքին նվիրված ոսկե պահարանը և Էաչեի կողմից Խոտակերաց վանքին տրվածը: Պահարանի երկարությունն է 56 սմ., լայնությունը՝ 24 սմ, իսկ հաստությունը՝ 5 սմ:

Այն երկփեղկ դռնակով է, ներքևի մասում ուղիղ, իսկ վերևը երկկենտրոն՝ սուր կամարով: Պահարանի երեսը ամբողջովին պատված է բուսական զարդամոտիվով, իսկ դռնակների վրա զարդարանքից զատ կա չորս պատկերագրություն: Վերին տեսարանը Ավետումն է: Հրեշտակը աջից մոտենում է կույս Մարիամին, որը ձեռքին սափոր ունի բռնած, իսկ նրանից ներքև պատկերված է խաչելության տեսարանը՝ աջից Հովհաննես Մկրտիչն է, ձախից Մարիամ Աստվածածինը՝ ձեռքերը կրծքերին դրած: Խաչելության դիմաց մյուս դռնակի վրա, բուսական զարդարանքի մեջ պատկերված է լուսապսակով և երկարազգեստ հագուստով տղամարդու պատկեր: Գարեգին Հովսեփյանի կարծիքով դա Գրիգոր Լուսավորչի պատկերն է աջ ձեռքում խաչ, իսկ ձախում՝ հովվական գավազան: Այդ միտքը հաստատելու համար նա զուգահեռ է անցկացնում Խոտակերաց սբ. Նշանի պահարանի վրա պատկերված Գրիգոր

[63] Տես՝ Հովսեփյան, ..., հավելված Ա-15:

Լուսավորչի անվանագիր պատկերագրության հետ: Պահարանի նորոգող Սարգիս և Գրիգոր ոսկերիչները Գեղարդի մասնատուփի վրա դրվագած անձանց պատկերագրությանը չեն կարողացել տալ անհրաժեշտ կենդանություն: Պատկերների դեմքերը նիհար են, աշխարհիկ կյանքից զուրկ դիմագծերով, սակայն շարժումները դինամիկ են, կեցվածքները՝ բնական: Հագուստները ծալքավոր են, մինչև ծնկները հասնող: Բացի Գրիգոր Լուսավորչից բոլորը ոտաբոբիկ են: Պահարանի դռնակները ամուր ծղխնիով ամրացված են իրանին, իսկ կենտրոնում բավականին կոպիտ փական կա, մեր կարծիքով հետագա դարերում ավելացրած, որովհետև այն իր պատրաստման վարպետությամբ խիստ զիջում է ոսկերիչներին բնորոշ նմանատիպ նուրբ աշխատանքներին: Դռնակների բաց վիճակում պահարանի կենտրոնում, երկաթե նիզակը կամ գեղարդն է, հատուկ իրեն համար պատրաստված փոսորակի մեջ: Պահարանի ներսի դաշտը և դռնակների երեսները դրվագված են նույնատիպ բուսական զարդերով: Նմանատիպ զարդերով է դրվագրված նաև պահարանի կողերը: Դրվագրման տեխնիկան և բուսական զարդերը բնորոշ են XVI-XVII դարերի համանման զարդերին:

Գեղարդի համար նոր պահարան պատրաստելուց կամ նորոգելուց ընդամենը հինգ տարի անց, Նոր Ջուղայում 1692 թ. Ազարիա Ջուղայեցին մի ձեռագիր է գրում, որտեղ բազմաթիվ մասունքների մասին խոսելիս անդրադառնում է նաև Գեղարդին՝ մասնավորապես գրելով. **«Եւ արդ՝ սուրբ Գեղարդն Քրիստոսի երկնային գանձն լուսոյ կայ... յաշխարհին Հայոց և որք տեսանեն զնա, մի տեսցեն զմահ յաւիտենից: Եւ նմանութիւն Աստուածակիր Գեղարդին այսպես է. Գմբէթաձև ի վեր քաշեալ զգլուխ նորա որպէս նիզակին սուր թառփաւոր, և ձևեալ որպէս զխաչ. և փորեալ հատուածին երկու կողմանց երեսաց սուրբ խաչին բևեռեալ. և վայր կողմն նիզա-**

կին, չորս մատնիչափով, բայց ոչինչ քանդակեալ՝ այլ անարատ հաւասար: Այս է նշան սուրբ Գեղարդին[64]:

Համանման նկարագրության հանդիպում ենք նաև Ոսկեփորիկ ժողովածուում, որը Գեղարդի նկարագրության համարյա բառացի կրկնությունն է: Այս նկարագրությունը մեզ հիշեցնում է XIII դարով թվագրվող ձեռագրի հիշատակարանում արդեն մեր կողմից օգտագործած և «Արարատ» ամսագրում հրատարակված սբ. Գեղարդի պատմության նկարագրությունը: Հավանաբար դրանք մեկը մյուսից են վերցրել: Բոլոր դեպքերում Ազարիա Ջուղայեցին չի ճշտում, թե որ վանքում է գտնվում իր կողմից նկարագրված Գեղարդը: Իսկ որ այն դեռևս գտնվում էր Այրիվանք-Գեղարդավանքում իմանում ենք Իտալացի ճանապարհորդ Ջեմելիի վկայությունից: Նա 1694 թ. հունիսի 2-ին այցելում է Երևան, ապա նշում է, որ ութ ժամ ձիավարելով հասնում է Գեղարդավանք, ուր հիշատակում է նաև սբ. Գեղարդի գոյության մասին[65]:

Վերջապես XVIII դ. սկզբին Աբրահամ կաթողիկոսը շրջագայություն է կատարում Այրարատի վանքերը, երկու օր հյուրընկալվում Այրիվանքում, այդ մասին գրելով. «Ի Սուրբ Գեղարդն, որպէս ասէ, մնալով անդ երկու գիշեր»[66]: Նադիր Շահի տիրապետության ժամանակ սբ. Գեղարդը հավանաբար դեռ Այրիվանք-Գեղարդավանքում էր, քանի որ վանքը շեն էր, և միաբաններով լեցուն, հետևաբար նրանք իրենց այդքան մեծ հեղինակություն ունեցող մասունքից անհնար էր որ հրաժարվեին:

Գրավոր առաջին վկայությունը, այն մասին, որ սբ. Գեղարդը հրաշագործ հատկություն ուներ հատկապես ուշ միջնադարում պատուհաս դարձած ժանտախտ համաճարակի դեմ պայքարում, իմանում ենք Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1763-1780 թթ.) հիշատակարանից: Մասնավորապես նա հայտնում է, որ 1765 թվին Ալաշկերտի հովտում բռնկվել էր ժանտախտ. «Քանզի ի հերում ամէ սկսեալ ժանտամահն ի յերկիրը Ալաշկերտու, ընդ բազում տեղիս տարածեցաւ մինչեւ ցայժմ և զանթիւս կոտորեաց: Եւ գալով էհաս ի Բայազիտ քաղաքն և երեւեցոյց անդէն զնշանն: Եւ նոյն ժամայն գրեալ ժողովրդոցն Բայազիտու առ սրբազան Վեհն զաղերսանաց թուղթ, յղեալ էին առ սրբազան Վեհն ի ձեռն Տէր Վահան քահանային և երից աշխարհականաց, **աղաչելով՝ զի յղեսցէ փութով ի քաղաքն հրեանց զսուրբ Գեղարդն, ի բուժումն մեծի տագնապին: Իսկ յաղագս զի՝ վասն ահի անօրէն լէզկեացն, որ այժմ գոյր ի միջի տակաւին, նաեւ վասն այլոց պատճառաց չեղեւ ձեռնտու զսուրբ Գեղարդն յղել,** վասն որոյ յղեաց այժմ յօգնութիւն նոցին զսուրբ Ամենափրկիչն նաեւ վասն սրբոյ Նշանին Տէրունական՝ որ անդ կայր յաւանդ առ Մարգարէ Աղայն: Գրեաց սրբազան Վեհն առ Մարգարէ Աղայն զթուղթ՝ զի տացէ Մինաս վարդապետին, զի ընդ սրբոյ Ամենափրկիչն բազմեցուսցէ յեկեղեցւոջն, զի ժողովուրդքն ուխտեսցին. և մինչ այսր դառնալոց իցէ Մինաս վարդապետն (զոր յղեաց սրբազան Վեհն ի սպասաւորութիւն սրբութեանցն) դարձեալ առցէ ի նմանէ կնքով նորին և պահեսցէ: Իսկ և գրեաց սրբազան Վեհն զթուղթ առ ժողովուրդսն բայազտոյ քաղաքին, օրհնութիւն և մխիթարութիւն նոցին վասն վշտացն»[67]: Այս վկայությունից պարզվում է, որ ոչ միայն սբ. Գեղարդը հռչակված էր որպես ժանտախտ համաճարակը դարմանող սրբություն, այլև կաթողիկոս Սիմեոն Երևանցին վախ զգալով, որ այն կարող է ընկնել ավարառու լեզգիների ձեռքը նպատակահարմար չգտավ այն Բայազետ ուղարկել: Բայց կա մեկ այլ հիմնավոր պատճառ ևս, որի մասին հստակ չի խոսվում: Մեր կարծիքով դա այն էր, որ սբ. Գեղարդը Էջմիածնի անմիջական

[64] **Շահխաթունեանց,** էջ 50, նաև Այրարատ, 348 ծան.:

[65] **Ալիշան,** Այրարատ, էջ 348:

[66] Անդ:

[67] Դիան հայոց պատմության, գիրք Գ, Սիմէոն կաթողիկոսի Յիշատակարանը, Թիֆլիս, 1894, էջ 508-509:

ենթակա սրբություն չէր, այլ այն պատկանում էր դեռևս գործող Գեղարդավանք-Այրիվանքին, ուստի կաթողիկոսը չկարողացավ բավարարել բայազետցիների խնդրանքը: Այլ դրա փոխարեն առաջարկեց Տերունական Սուրբ Նշանը և Ամենափրկիչը, որոնք մինչ այդ արդեն գտնվում էին Բայազետում: Դեռևս 1760 թվին Էջմիածնի միաբանները վախենալով Արարատյան աշխարհում տիրող անկայուն վիճակից և լեզգիների կրկնվող արշավանքներից, վանքին պատկանող հարստության մեծ մասը և սրբությունները առաքել էին ու պահ տվել Բայազետի մեծահարուստներին: Այդ մասին իմանում ենք Սիմեոն Վեհապետի մյուս նամակների բովանդակություններից, որոնք ուղղված էին Բայազետի մեծահարուստներին[68]: Առաքված հարստությունների միայն մի մասն է ետ վերադարձվում Էջմիածին, որովհետև հիշատակարանում կարդում ենք հետևյալ տողերը. «Իսկ ինչքն վանիցն, որք ի Բայազիտ էին և որք անդէն ի վանսն (զորոց ասացաւ ևս ի Յուլ. Գ(=3)) ամենեքին ի ձեռն եղբորորդւոյ Աղէքսանդր վարդապետին և այլոց նորին ընտանեաց և սեխեխաց, փչացեալք և վատնեցեալք էին: Թէպէտ և բազումս զնոսա խոշտանկեաց սրբազան Վեհն երել ի յայտ, այլ վատնեալ էին և սակաւ ինչ եկն ի յայտ ի «հոկ. Դ (=4)»[69]:

Սիմեոն Երևանցին իր Ջամբռ աշխատության մեջ, որն ավարտել է 1765 թվին, Գեղարդավանք-Այրիվանքի մասին հաղորդում է, որ այն բազմաթիվ գյուղերի, այգիների, ձիթհանքերի և ջրաղացների սեփականատեր էր, հետևաբար ուներ բազմանդամ միաբանություն և պետք է ենթադրել որ վանքին պատկանող սրբությունները, որոնց թվում նաև սբ. Գեղարդը դեռևս պահվում էին այդ վանքում:

[68]. Անդ. էջ 303 և 556:
[69] Անդ:

Վերը հիշատակված քաղաքական անկայունության և լեզգիների կրկնվող արշավանքի հետևանքով 1770-80-ական թվերին ավերված ու լքված բնակավայրերի ու վանք - մենաստանների թվին էր պատկանում նաև Գեղարդավանքը: Այդ մասին կողմնակի կերպով վկայում է 1813 թ. Հայաստան այցելած Անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերն, որը ճանապարհորդելով Արևելքում, այցելում է նաև Երևան, ապա հարկադրական պարապուրդից օգտվելով ուղեվորվում է Այրիվանք-Գեղարդավանք ու իր տպավորությունները գրում այսպես. «...Վանքը...կառուցված է քարից ինչպես մյուս բոլոր եկեղեցիները Երևանի ամբողջ հողամասում, և մի շարք կոպիտ սենյակներ կան նրա շուրջը, որոնք ծառայում են կրկնակի նպատակով, այն է պաշտպանության և վանականների բնակության համար: Այս եկեղեցու հետաքրքրական մասերն են մի կարգ փորված սենյակները, որոնք նմուշներ են այն նեղություններին ու աշխատանքին, որ գործ են ածվել այս շենքի ամբողջացման համար: Այս սենյակները թվով երեքն են, լուսավորված վերևից ժայռի միջի բացվածքով և հղկված են ու վերածված խորանների, մենաստանների ու խոստովանարանների...: **Հայերը լքել են այս վայրը քառասուն կամ հիսուն տարիներից ի վեր: Գտնվում է տակավին բավական լավ վիճակում, շնորհիվ իր կառուցվածքի ամրության, և շատ քիչ ծախքով կարելի է այն կատարյալ դարձնել: Տարվան որոշ եղանակին հայերը հաճախում են այստեղ որպես ուխտավայր...»**[70]:

Մորիերի վերոհիշյալ վկայությունից պարզվում է որ սբ. Գեղարդը Այրիվանք-Գեղարդավանքի կործանումից ու լքվելուց հետո XVIII դարի վերջին տեղափոխում են Էջմիածնի Մայր տաճար ու հռչակում Հայոց կաթողիկոսներին պատկանող նշանավոր մասունքներից մեկը: Թե՞, որոշակի երբ է տեղի ունեցել այդ դեպքը, պարզ չէ: Բազմավաստակ հայագետ Ալեքսանդր Երիցյանը, որ քաջատեղյակ

[70] Ուղեգ.,Դ-Ջ. էջ 349-350:

էր Էջմիածնի կաթողիկոսարանի բոլոր անցքերին և գրել է «Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք XIX դարում» երկհատոր ուսումնասիրությունը, անդրադարձել է նաև խնդրո առարկա սբ. Գեղարդին:

Պարզվում է որ սբ. Գեղարդի հրաշագործությունների նկատմամբ մեծ հավատ են ունեցել ոչ միայն Կովկասի հայերը, այլև օտարազգիները՝ վրացիներ, մահմեդականներ և այլն, ու մեծամեծ դժբախտությունների ժամանակ (ժանտախտ, տարբեր համաճարկներ և այլն), միշտ դիմել են նրա հրաշագործ զորության օգնությանը: Օրինակ, 1797 թվին Թիֆլիսում սկսում է մոլեգնել ժանտախտ համաճարակը: Վրաց Գեորգի թագավորը խնդրանքով դիմում է ժամանակի Հայոց կաթողիկոսին Գեղարդը Թիֆլիս տանելու թույլտվությամբ: Այդ մասին իմանում ենք Ղուկաս կաթողիկոսի Հիշատակարանից, ուր գրված է. **«Երկիրն վրաց յետ առաջնոյ փորձութեանցն ի մահ տարաժամէ ևս յոյժ նեղեցաւ. (որպէս Գանձակ և Արցախ ևս կարի յոյժ) մինչև մեծ թախանձանօք քանիցս խնդրեաց նոր արքայն զսուրբ Գեղարդն, և մեք առաքեցաք ձեռամբ Յովհաննէս վարդապետին ի նոյեմբեր Դ(=4), որոյ ի ժամանիչն Աստուծոյ ողորմութեամբն փարատեալ է ախտն. և ցրուեալ քաղաքացիքն ժողովին. բայց թող զի ներքս իւրեանց տարաձայնութիւնն ի շահէն ևս կասկած գոյ, և սակայն ի հիւսիսոյ ևս խնամելոյ օժանդակելոյ յոգս կայ»**[71]:

Ականատեսների վկայությամբ ցավը շուտով վերանում է: Հավատալով այդ սրբության հրաշագործ կարողությանը, ջերմեռանդ Վրաց թագավորը կամենում է ընդմիշտ սեփականացնել այն, պահել Գեղարդն իր մայրաքաղաքում և տարիներ շարունակ չէր շտապում վերադարձնել Էջմիածին: Նույնիսկ նա առիթը բաց չթողեց, հիմնավորելու իր այդօրինակ վարմունքը:

[71] Դիան, հ. Ա-Բ, էջ 41-42:

Երբ, 1799 թ. դեկտեմբերին իր մահկանացուն կնքեց ծերունի Տեր Ղուկաս կաթողիկոսը, ապա Ռուսահայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղության արքեպիսկոպոսը եռանդուն գործունեություն ծավալեց կաթողիկոս ընտրվելու համար, աջակցություն ունենալով Ռուսաց կայսր Պավելին, Վրաց Գեորգի թագավորին ու Ռուսաստանի մեծահարուստ հայերին ի դեմս Լազարյանների: Այս մասին դիվանում կարդում ենք «(Լուրը-Ի. Ղ.) հասեալ ի Տփխիս, Լազրով անուն ղէներալն (գեներալ) նոյն քաղաքի և Կեօրկի արքայորդին վրաց կոչեն զՅովհաննէս արքեպիսկոպոսն Ակնցի՝ որ պաշտօնատարութեամբ սրբոյ Գեղարդեանն գտանէր անդ յաւուրսն յայնոսիկ վասն ժանտախտին առաքեալ ի Ղուկաս կաթողիկոսէ, ասեն ցնա. լուաք զվախճանէ. կաթողիկոսին ձերոյ և զնորոգ ընտրեալ յաջորդէ նորուն: Արդ, ահա ասեմք ցքեզ, անհնար է ումեք յաջորդիլ ի կաթողիկոսութիւն մինչդեռ կայ Յովսէփ արքեպիսկոպոսն. վասն որոյ կանխաւ ազդ առնեմք՝ գրեա փութով առ միաբանսն, զի յանուն Յովսէփայ գրեսցեն զմահսէր և առաքեսցեն: Ապա թէ ոչ՝ մենք կարող ենք զընտրեալն ձեր տալ արգելուլ և զնա նստուցանել: Ուստի գրէ Յովհաննէս եպիսկոպոսն ի սուրբ Էջմիածին առ միաբանսն և հարկէ մահսէր մի ևս յանուն նորա զիարդ և է գրեալ յղեսցին: Գրեն և տփխիսեցիք առ ժողով միաբանութեան Էջմիածնի և հարկեն առնել ըստ այնմ»[72]:

Բայց Էջմիածնի միաբանությունը մտավախություն ուներ, որ նման պարագայում մահմեդական Թուրքիան և շահական Պարսկաստանը խիստ անբարյացկամ դիրք կգրավեն Սբ. Աթոռի նկատմամբ, որը գտնվում էր վերջինիս տիրապետության տակ: Ուստի շտապեցին կաթողիկոս ընտրել Կոստանդնուպոլսի պատրիարք Դանիելին և Դավիթ եպիսկոպոսին հրավիրակ ուղարկեցին, որ վերջինս շտապի, քանի դեռ Հովսեփ Արղությանը չի հասել Էջմիա-

[72] Դիան, հ. Ա-Բ, էջ 47:

ծին: Հենց այդ օրերին Էջմիածին են գալիս Վրաց թագավորի և Թիֆլիսի հայոց պատվիրակները վերը հիշատակված նամակի բովանդակությամբ ու պահանջում են միաբանությունից, որ Հովսեփին անպայման ընտրեն Հայոց կաթողիկոս, հակառակ դեպքում նրանք սպառնացին. «Սբ. Գեղարդը չեն վերադարձնի Աթոռին»:

Սա այնպիսի սպառնալիք էր, որ իրարանցում առաջացրեց Էջմիածնի միաբանության շարքերում: Վերջիններս հուսահատված կրկին միաբանության ժողով են գումարում և որոշում են ընտրելի համարել ինչպես Դանիել պատրիարքին, այնպես և Հովսեփ արքեպիսկոպոսին ու այդ մասին շտապ հաղորդում են Պոլսի հայությանը թողնելով նրանց կամքին՝ ընտրեն երկուսից որին կամենան:

Հովսեփ Արղությանի տարաժամ, մտորումների տեղիք տվող մահվան պատճառով (1800 թ.) կաթողիկոսի ընտրության խնդիրը ձգձգվում է և սբ. Գեղարդի Էջմիածին վերադարձնելը դրվում է կասկածի տակ: Մանավանդ այն բանից հետո, երբ 1801 թ. մարտի 20-ին միաբանությունը որոշում է ընդունում նոր իրադրությունում կաթողիկոսության աթոռը տալ Դանիել պատրիարքին: Բայց գաղտնաբար, Դավիթ եպիսկոպոսի դրդմամբ, Վրաստանի թեմի առաջնորդ Գրիգոր վարդապետ Աղքերմանցին գրավոր և պատվիրակների միջոցով խնդրում է Երևանի պարսիկ խանին, որ Դավիթ եպիսկոպոսին, որը տեղապահի պաշտոնն էր վարում Էջմիածնում, դարձնի կաթողիկոս: Ահա այսպիսի մի խառնակ ժամանակաշրջանում դեռևս Թիֆլիսում գտնվող ու Գեղարդին սպասարկող Հովհաննես Ակնցի եպիսկոպոսը ստիպված գիշերով գողանում է Թիֆլիսի հայոց եկեղեցում պահվող սբ. Գեղարդը և մեծ դժվարություններով հասցնում է Էջմիածնի Մայր Տաճար, որի համար արժանանում է «Հովհաննես Գեղարդակիր եպիսկոպոս» պատվանունին:

Գեղարդի Էջմիածին հասնելը տեղի է ունեցել 1801 թ. մինչև վրացահայերի թեմի առաջնորդի նամակը կհասներ Երևանի խանին: Միայն այդպես կարելի է եզրակացնել դիվանի մեջ տեղ գտած

հետևյալ բովանդակությունից. «Ջայսոցիկ գրութեանց հասելոյ յԵրեւան տեղեկացեալ միաբանից Էջմիածնի խռովին և շփոթին մեծապէս և առ ժամն ժողովին ի տաճար անդր սրբութեան և երդնուն ամենեքեան յանուն սրբոյ Գեղարդեան և տաճարին չխնդրել զայլ ոք բաց ի Դանիէլէ, ապա զկնի այսր՝ գրեն ի Տփխիս և առ խանն Երեւանայ զերդմանէ իւրեանց և զկամաց՝ թէ մինչև ցմահ մեր բաց ի Դանիէլէ ոչ զոք ընտրեմ և ոչ ընդունիմք և ահա գրեալ իսկ եմք ի Կոստանդնուպօլիս և առ Դանիէլն փութալ գալ օր յառաջ և մերձ է իսկ գալուստ նորին այսր վասն որոյ այսպիսի յառաջադիմութիւն խնդրեմք չառնել այսուհետև և չիարկել մեզ, ապա թէ ոչ, ունիմք ցրուիլ միաբանութեամբ հանդերձ և աթոռն մնալոց է աւեր. Դուք գիտասջիք»[73]:

Այս խառնակ իրադրության մեջ, օգտվելով տեղապահի իր դիրքից Դավիթ եպիսկոպոսը փորձում է խորամանկությամբ իր ձեռքը գցել վանքի առավել նշանավոր մասունքները՝ մասնավորապես սբ. Գեղարդը: Այդ նպատակին հասնելու համար 1802 թ. հունվարին Ծննդյան գիշերը հանձնարարում է իր վստահելի սպասավորներին Վեհարանից գաղտնաբար դուրս տանել և Երևան հասցնել մի արկղ: Միաբաններից ոմանք իմանալով այդ մասին հետապնդում են կասկածյալներին և Երևան չհասած հասնում են նրանց, ստիպում բացել բեռները և սիսեռի պարկի մեջ գտնում են այդ արկղը, որը կնքված էր Դավթի և մյուսների կնիքներով: Չհամարձակվելով բացել կնիքները արկղը հասցնում են Երևան Հովհաննես Կոստանդնուպոլսեցի եպիսկոպոսին, որպեսզի վերջինս բաց անի այն: Բայց վրա են հասնում Երևանի աթոռակալ եպիսկոպոսը և Մելիք Աբրահամը և խանգարում են դրան: Նորեն կնքելով իրենց կնիքնե-

[73] Անդ՝ էջ 88-89, Մասնավորապես Երևանի խանին գրած նամակում կարդում ենք. «Այս բանիս համար այժմոյս ըստ օրինաց մերոց երդումն արարաք այս մեր օճաղովն և սուրբ Գեղարդովն՝ որ Դանիէլ վարդապետիցն դայրի այլ ուրիշ մարդ ոչ մեզանից և ոչ այլոց խալիֆայ չառնեմք: Ստուծով նա Դանիէլ վարդապետն էլ յայս մօտ աւուրք կգայ ...»: Այս նամակի տակ ստորագրում են 49 մարդ և կնքում իրենց կնիքներով: Նույն տեղում, էջ 89:

ռով ի պահ են տալիս հարյուրապետ Գաբրիելին: Այս մասին իմանալով Երևանի ժողովուրդը և իշխանները բազմիցս պահանջում են բացել արկղը և պարզել նրա պարունակությունը: Բայց Դավիթ եպիսկոպոսը բանադրանքի սպառնալիքով նամակ է ուղարկում Մելիք Աբրահամին և Գաբրիել հարյուրապետին պահանջելով վերադարձնել այդ արկղը Մայր Աթոռին, իբր այնտեղ միաբանների ներկայությամբ այն բացելու համար: Հովհաննես եպիսկոպոսը լսելով այդ առաջարկը տանում է արկղը Էջմիածին և պահում Ղազարապատի մեջ՝ վրան կարգելով վեց պահապան: Երբ միաբանները հեռանում են երեկոյան ճաշի, Դավիթ եպիսկոպոսը կարգադրում է հրացանավորների օգնությամբ պահապաններից խլել արկղը կոտրելով պահասենյակի դուռը ու տանել Վեհարան:

Միաբանների խոստովանահայր Ղազար եպիսկոպոսը իմանալով այս մասին սեղանատանը՝ ի լուր բոլորի հայտարարում է. «կրօնք մեր խայտառակեցան, քրիստոնէութիւն բարցաւ, պատիւ կարգի մերոյ յերկիր անկաւ, անուն սուրբ Էջմիածնի արհամարհելի եղև, աւաղ վատաբախտութեան սուրբ աթոռոյս՝ որ պահարան ինչից սորին գող և յափշտակող փոխարկեցաւ»[74]: Այս խոսքերն առաջ են բերում մեծ իրարանցում, նույնիսկ ընդհարումներ: Ի վերջո վաղարշապատցիք և մյուսները հավաքվում են վանքի արտաքին պարսպի հրապարակում և փորձում խորտակել Մեծ դուռը և պատժել մեղավորներին: Բայց նրանց մոտ է գալիս Դավիթ տեղապահը անձամբ և խնդրում հանդարտվել և վերադառնալ իրենց տները: Հետագայում պարզվում է, որ այդ արկղի մեջ. «... լինել սրբոյ Գեղարդեանն և այլոց սրբազան անոթից սրբոյ Աթոռոյն»[75]:

Ավելի ուշ, ամիսներ անց, երբ Դանիել կաթողիկոսը 1802 թ. մայիսի 27-ին Բայազետի վանքում գրում էր իր անդրանիկ կոնդակը, հիմնավորելով իր կաթողիկոս ընտրվելու օրինականությունը, մասնավորապես գրում էր. «...ընթերցան և զգիրս միաբանիցն առ Երևանու խանն 49 կնքով, ևս և զօրինակ գրոյն առ Դաւիթ խանն յապրիլի 8, յանցեալ ամի, յորս գրեալ էր, թէ մի բռնադատէք մեզ վասն Դաւիթ կաթողիկոս կացուցանելոյ, քանզի մեք երդուեալ եմք ի սուրբ Խաչն Քրիստոսի, **և ի նորուն կողամուխ սուրբ Գեղարդն և** ի նշանագործ Աջ սուրբ Լուսաւորչին և նզովիւք հանդերձ փակեալ եմք, թէ բաց ի յօրինատր ընտրելոյն մերոյ՝ որ ոք ինքնակամ օծցի բռնութեամբ անիծեալ լիցին յԱստուծոյ ինքն և օծանողքն իւր»[76]: Այս խոսքերին այլևս որևէ մեկնաբանություն պետք չէ, հիմնավորելու համար Գեղարդի նշանակությունը Էջմիածնի միաբանության համար:

Գեղարդը մնաց Էջմիածնում մինչև 1805 թիվը, երբ Իշխան Ցիցիանովը անհաջող փորձ կատարեց Երևանը պարսիկներից գրավելու, բայց վերահաս ձմեռը, զորքի մեջ տարածված հիվանդությունները և սննդամթերքի պակասը, ստիպեցին նրան դադարեցնել պաշարումը և վերադառնալ Թիֆլիս: Վերադարձի ճանապարհին Ցիցիանովի հրամանով Էջմիածնի վանքից մի շարք հարստություններ թվում Թիֆլիս է տարվում նաև սբ. Գեղարդը, պատճառաբանելով, որ իրենց հեռանալուց հետո պարսիկները կթալանեն Մայր Աթոռի թանկագին գույքը: Այս մասին տեղեկություն է հայտնում նաև Նապոլեոնի դեսպան գեներալ Գարդանը 1807-8 թթ. ճամփորդություն կատարելով Արևմտյան Հայաստանում և Պարսկաստանում: Մասնավորապես Արարատ լեռը նկարագրելիս գրում է. «Այս լեռան ստորոտումն է գտնվում Էջմիածնի վանքը, թուրքերեն անվանում են Ուչ-Քիլիսա: Ռուսները երբ 1805-ին գրավեցին Էջմիածինը, թալանեցին եկեղեցին, գանձարանը և մատենադարանը: Ավելի ուշ, երբ պարսիկները վերագրավեցին, գրքերից փամ-

[74] Անդ, էջ 146-147:
[75] Անդ, էջ 148:
[76] Անդ, էջ 153-154:

փուշտներ պատրաստեցին և տպարանի տառերը հալեցնելով գնդակներ շինեցին»[77]:

Գեղարդը մնաց Թիֆլիսում մինչև 1810 թվականը: Այն ժամանակ, երբ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Եփրեմը կաթողիկոս ընտրվեց, Էջմիածին մեկնելիս Թիֆլիսից իր հետ տարավ նաև Մայր Աթոռին պատկանող սրբությունները, որոնց թվում և սբ. Գեղարդը: Բայց հաջորդ 1811 թվին նորից ժանտախտ է բռնկվում Թիֆլիսում և տեղի հայերի և գեներալ Տորմասովի միջնորդությամբ Գեղարդը նորից է տարվում Թիֆլիս ու այնտեղ պահվում մինչև համաճարակի ավարտը: Բոլոր դեպքերում 1813 թ. սբ. Գեղարդը արդեն Էջմիածնում էր, որովհետև այդ թվին անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերը Երևանում եղած ժամանակ այցելում է Էջմիածին՝ հանդիպելու Եփրեմ կաթողիկոսին ու նկարագրելով Մայր Տաճարում իրեն ընդունելության մանրամասները, մասնավորապես գրում է. «Ապա նրանք մեծ արարողությամբ մեզ ցույց տվին եկեղեցու թանկագին մասունքները: **Առաջինը և ամենագլխավորը ասում էին թե գլուխն էր այն նիզակի, որով հռովմեացի զինվորը ծակեց մեր տիրոջ կողքը: Երբ բերին այն ու դրին խորանի վրա, բոլոր հայերը խոր խոնհարհեցրին իրենց գլուխը: Նրա ձևը այսպես էր (հեղինակը զետեղել է Գեղարդի գրչանկարը) մոտ մեկ ոտք երկար: Այս մասունքը, որի վրա նրանք նայում են որպես իրենց ունեցածներից ամենաառաջինի վրա, բացի ուրիշ հրաշքներից, ասում են թե, կարող է կասեցնել ժանտախտի տարածումը. նոր էր այնտեղ բերված, որովհետև հիշատակված չէ այն բաների մեջ, որ Շարդենը տեսավ (հեղինակը տալիս է հետևյալ ծանոթագրությունը. -Նախապես պահում էին դա Գեղարդի եկեղեցում, ասում են թե շինված հատուկ դրա համար, բայց [վանքը] լքված լինելով նիզակի գլուխը փոխադրված է էջմիածին»[78]:**

[77] Ուղեգ. հ-Ջ, էջ 101:

Մեկնաբանությունները ավելորդ են:

Այնուհետև, հաջորդ 1814 թվին կրկին Թիֆլիսում բռնկվում է ժանտախտի համաճարակ: Այդ տարիների Թիֆլիսի կառավարիչ և գլխավոր հրամանատար գեներալ Ռտիշչևի խնդրանքով Էջմիածնի ծերունազարդ Եփրեմ կաթողիկոսը ընդառաջելով, նորից սուրբ Գեղարդը, ուղարկում է այնտեղ, որտեղից ետ վերադարձվեց միայն 1815 թ. վերջերին: Գեղարդը Մայր Աթոռին վերադարձնելու մասին տեղեկանում ենք Մորից Ֆոն Կոցեբուի ճանապարհորդական ուղեգրությունից՝ դեպի Պարսկաստան:*

Ռուսական դեսպանության ուղևորությունը իրականացվել է 1817 թվի ապրիլ-հոկտեմբեր ամիսներին[79]: Գեներալ Երմոլովի պատվիրակությունը այցելում է Էջմիածին իր հարգանքի տուրքը մատուցելու Եփրեմ կաթողիկոսին և միաբանությանը: Վերջինս ի պատիվ ռուսական դեսպանության կազմակերպում է ընդունելություն, ինքն էլ հանդես գալիս ողջույնի խոսքով, որից ազդված միաբանների մեծ մասը բարձրաձայն լաց է լինում՝ ի նշան այն բանի,

[78] Մնդ, էջ 328-329:

* Մորից Ֆոն Կոցեբուն Ռուսաստանում ծնված գերմանացի սպա էր, որը ծառայում էր ռուսական բանակում և 1817 թ. Կովկասի կառավարիչ և գլխավոր հրամանատար գեներեալ Երմոլովի դեպի Պարսկաստան ուղևորվող դեսպանության անդամ էր: Ճանապար-հորդությունից անմիջապես հետո Ֆոն Կոցեբուն 1818 թ. գերմաներեն, իսկ 1819 թ. անգլերեն լեզուներով հրատարակեց իր ուղեգրությունը: Շուտով այն լույս տեսավ նաև ֆրանսերեն թարգմանությամբ: Ուղեգրությունը շատ հետաքրքիր տեղեկություններ է պարունակում Հայաստանում տիրող պարսկական տիրապետության, Էջմիածնի Մայր Տաճարի և նրա միաբանության, Երևանի սարդար Հուսեյին Ղուլի խանի կատարած չարագործությունների, թալանի և անմարդկային վերաբերմունքի մասին տեղի հայ բնակչության և Էջմիածնի կաթողիկոսության նկատմամբ: Հեղինակը նկարագրում է այդ թվերին Երևանի առանձին թաղամասեր, սարդարի պալատը, Երևանի բերդը, Հրազդանի կամուրջը և նորատունկ այգին, որը տարածվում էր Բերդի դիմաց Հրազդանի աջ ափին: Ֆոն Կոցեբուի ուղեգրության Հայաստանին և հայերին վերաբերող հատվածների մասին պատրաստել ենք առանձին հոդվածաշար մամուլում հրապարակելու համար:

[79] Մնդ, էջ 499-612:

որ իրենց կողքին տեսնում են այդքան մեծ թվով հավատակիցներ՝ քրիստոնյաներ: Այդ մասին ուղեգրության հեղինակը այսպես է գրում, անդրադառնալով նաև Գեղարդի խնդրին. «Մենք բոլորս հուզված էինք, և պատկառելի կաթողիկոսը այնքան զգացված էր, որ հազիվ թե կարողացավ վերջացնել իր ուղերձը: Ամեն ինչ վերջացավ մի աղոթքով...: Երբ արարողությունը վերջացավ, մենք համբուրեցինք Ս. Գրիգորի և Հակոբի աջը, ինչպես նաև Գեղարդը, որը ծակել էր մեր փրկչի կողը: Կապված այս նվիրական մասունքներին ոսկի շղթայով կախված էր Նոյան տապանի մի կտոր, որից նախապես փոքր կտորներ կարելի էր գտնել, սակայն այժմ շատ դժվար խնդիր է: Կաթողիկոսը, որպես հիշատակ մեզ նվիրեց սբ. Գեղարդի մոմյա կաղապարը: Գեղարդը հաճախ ժանտախտի ժամանակ տարվել է Թիֆլիս և հրաշքներ է գործել»[80]:

Այսպիսով, Մորից Ֆոն Կոցեբուն ոչ միայն հաստատում է Գեղարդի հրաշագործ կարողությունը համաճարակների դեմ պայքարում, այլև հաստատում է այն իրողությունը, որ Գեղարդը բազմաթիվ անգամներ տարվել է Թիֆլիս այդ նպատակի համար: Պարզվում է նաև, փաստորեն ուղեգրության հեղինակի այցելության ժամանակ Գեղարդը Էջմիածնի վանքում էր: Այդ նույն միտքն է հաստատում նաև ազգությամբ անգլիացի նկարիչ և հնագետ Ռոբերտ Քեր Փորտերը 1817 թ. նոյեմբերին Թիֆլիսից Էջմիածին կատարած իր ճամփորդական գրառումներում, որտեղ կարդում ենք.

«Խորանը [Էջմիածնի վանքի] տակավին փայլում է ոսկով ու գոհարով, թեև մի քանի տարի առաջ միաբաններից մեկը հափշտակել էր նրա հարստության մեծ մասը... և իր նպատակին հասնելով սուրբ անոթները գաղտնորեն ուղարկեց Աստրախան ու վաճառեց: Բայց գողությունը և նրա կատարողը անմիջապես երևան գալով, նա դատապարտվեց ցկյանս բանտարկության մի խուցի մեջ...: Այս

[80] Անդ, էջ 530:

մարդը հիմա շատ ծերունի է և տակավին գտնվում էր արգելավայրում, երբ ես Էջմիածնում էի: Սուրբ նշխարներն այլևս առուտուրի շահաբեր առարկա չլինելով, մնացին անխախտ և նրանք մնում են այն վիճակում, ինչ որ Շարդենը նկարագրել է, տալով այնքան մանրամասն մի ցուցակ, որ ես հարկ չեմ զգում կրկնելու այստեղ և պիտի հիշատակեմ միայն մի քանի ամենանշանավորները: Այն քարը, որի վրա Ս. Գրիգորը նստել է, կամ քնել է, իր երազ տեսած ժամանակը, և այն Գեղարդը, որով զինվորը ծակեց մեր տիրոջ կողը»[81]:

Այնուհետև ուղեգրության հեղինակը մանրամասն խոսում է Գեղարդի մասին, պատմում է թե որ երկրներում կան գեղարդներ, հիշատակում է միջնադարյան աղբյուրները, հերքում է գեղարդի հետ կապված առասպելը և ենթադրում է, թե այս գեղարդը Կոստանդնուպոլսից է բերված Էջմիածին և այլն: Հաջորդ այցելության ժամանակ, որ տեղի ունեցավ 1819 թ. հոկտեմբերի վերջին, Ռոբերտ Ք. Փորտերը գրում է. «Նրա գանգը (Ս. Հռիփսիմեի), Ս. Գրիգորի աջի հետ պահվում է մի արծաթյա տուփում՝ Էջմիածնի ամենանվիրական մասունքների հետ, **Գողգոթայի Գեղարդի գլուխը, որ ավելի է հարգված քան սրանք, բոլորը միասին դուրս են բերվում ժողովրդի առաջ հանրային աղետների առթիվ: Այսպիսի մի պատճառով, ես նորից չկարողացա տեսնել Գեղարդը, որովհետև մի քանի օր առաջ ուղարկված էր Երևան՝ ամոքելու համար Երևանի բնակչության մեջ ավեր գործող մի սոսկալի ջերմ»**[82]:

Ռուս - թուրքական վերահաս պատերազմը Կովկասյան ռազմաճակատում սկսվեց 1828 թ. հունիսի 14-ին: Կարճ ժամանակում տեղի հայերի համակողմանի համակրանքի և օգնության արդյունքում գեներալ Պասկևիչին հաջողվեց գրավել Կարսը, Ախալքալակը, Արդահանը և Ախալցխան: Թուրքերի պարտությունը պատերազմի այս

[81] Անդ, էջ 756-57:
[82] Անդ, էջ 815:

թատերաբեմում կատարյալ էր: Դրանից ոգևորված Հայկական մարզի կառավարիչ գեներալ Ա. Ճավճավաձեն, փոքրաթիվ բանակով հարձակում սկսեց Բայազետի ուղղությամբ: Օգոստոսի 27-ին Բայազետի մոտ պարտության մատնելով թուրքական առաջապահ ուժերին, մոտեցավ քաղաքին: Պաշարված Բայազետի վիճակը խիստ ծանրացավ: Տեղի հայ բնակչությունը, ճնշում գործադրելով, հարկադրեց թուրքական կայազորին հաջորդ օրը՝ օգոստոսի 28-ին անձնատուր լինել: Շուտով դրան հաջորդեց Դիադինի և Ալաշկերտի գրավումը:

Սովորաբար նման պատերազմների և ավերածությունների ժամանակ, այն ուղեկցվում էր տարբեր տիպի համաճարակներով: Մասնավորապես սեպտեմբերի կեսերին Բայազետում մոլեգնեց ժանտախտը, որը սպառնում էր ոչ միայն տեղի բնակչությանը, այլև մարտնչող զորքին: «Լավ ճանաչելով տեղացի բնակչության բնավորությունը, -գրում է մի ռուս հեղինակ, - Իշխան Ճավճավաձեն աշխատեց ներգործել նախ և առաջ ժողովրդի բարոյական և հոգեկան ուժի վրա և դրանով ավելի լավ հասավ իր նպատակին, քան թե կարանտինական խիստ հսկողութեամբ: Նրա հրամանով բերեցին Էջմիածնից սբ. Գեղարդը և ականատեսները պատմում են, որ ամենուրեք ուր որ տանում էին այդ սրբությունը՝ թե հիվանդանոցներում թե՛ մասնավոր տներում և թե՛ քաղաքիս վարակված թաղերում՝ ցավը անմիջապես դադարում էր: Ժողովուրդը սրտանց հավատում էր այդ սրբության փրկարար զորությանը: Եվ ժողովրդի հավատը փրկում էր նրան»[83]:

Իրոք որ արդեն հոկտեմբերի վերջերին Բայազետում և նրա շրջակա գյուղերում դադարում է ժանտախտը, իսկ Սբ. Գեղարդը հազիվ էր վերադարձվել Էջմիածին, երբ լուր տարածվեց, որ այդ ահավոր ցավը, որը սովորաբար սկսվում է ամռան շոգերին ջրի աղտոտության հետևանքով այս անգամ սկսեց մոլեգնել նույնիսկ ձմեռ ժամանակ Սուրմալուի գավառում, գյուղերում, մասնավորապես Կողբի աղահանքերում և մեծ քանակի մարդկանց մահվան պատճառ դարձավ: Տեղի հայ բնակչության ներկայացուցիչները եկան Էջմիածին և խնդրեցին Եփրեմ կաթողիկոսից ուղարկել սբ. Գեղարդը ժանտախտը իրենց գավառում դադարեցնելու համար: Վեհափառը ընդառաջ է գնում ժողովրդի թախանձանքին և մի եպիսկոպոս ու մի քանի վարդապետներ թափորով տանում են Սուրմալու, պտտեցնում գյուղեգյուղ, ու ժողովրդի ջերմ հավատը, դեպի Գեղարդի հրաշագործ զորությունը, փրկում է նրանց այդ համաճարակից, համեմատաբար քիչ կյանք խլելով:

Կովկասյան կորպուսի հրամանատար Կոմս Պասկևիչը, որը դժգոհություն էր հայտնել գեներալ Ճավճավաձեի ինքնագլուխ գործողության համար, սբ. Գեղարդը Բայազետ տանելու հետ կապված, այժմ իմանալով, որ Եփրեմ կաթողիկոսն էլ այն ուղարկել է Կողբ, 1829 թ. փետրվարի 12-ին Վեհափառին գրում է հետևյալ բովանդակության մի նամակ. «Կողբ գյուղում եղած վարակիչ հիվանդութեան պատճառով տերութիւնը գործադրել է հարկաւոր միջոցները և կարանտինական զգուշութիւնը, որպեսզի դադարի այդ վնասակար ցավը և չտարածուի ուրիշ տեղերում: Այժմ «Հայոց Աշխարհի» վարչութիւնը տեղեկացնում է, որ վերոհիշեալ գյուղն են գնացել Էջմիածնից մի եպիսկոպոս, վարդապետ ու նրանց հետ եկած մարդիկ, որոնք տարել են իրենց հետ Գեղարդը, որով ըստ ավանդութեան խոցուած է եղել Հիսուս Քրիստոսը: Նրանք հայտնել են, թէ ուղարկուած են ձեր վեհափառութեան կողմից ժանտախտը դադարեցնելու համար: Նրանց ներկայութեան միջոցին անդադար խռնվում էր ամբողջ գյուղի ժողովուրդը. բոլոր այն գերդաստանները, որոնք արդեն վարակված էին ցավից, խառն պտտվում էին ամբոխում այնպիսիների հետ, որոնց առողջութիւնը կասկածելի էր, և

[83] Ա. Երիցեան, Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, մասն Ա (1800-1832 թթ.) Թիֆլիս, 1894, էջ 409-10:

ընդհանուր անկարգութիւն առաջացավ: Թեև այս եղելութեան դեմ ևս պետք եղած միջոցները գործի են դրված եղել, բայց ձերդ վեհափառութիւն, ինքներդ բարեհաճեցեք համաձայնվելու, որ այդպիսի գործողութեամբ խախտված են բարձրագույն իշխանութեամբ հաստատված կարանտինական այն կանոնները, որոնց ոչ ոք պիտի զանց առնէ: Եթէ այդ մասին առաջուց նախազգուշացնեիք տեղական վարչութեանը, որի գլխավոր պարտականութիւնն է հոգ տանել ժողովրդի բարօրութեան համար, այն ժամանակ, բավականութիւն տալով Կողբի բնակիչների ցանկութեանը սրբազան ծիսակատարութեան մասին վարչութիւնը պատշաճ տնօրինութիւն կաներ և պետք եղած կարգը կպահպաներ: Վասն որոյ խնդրում եմ Ձեզ, հովվապետ, որպեսզի այսուհետև այդպիսի գործերում և դեպքերում ոչինչ չձեռնարկեք առանց կանխապես խորհրդակցելու տեղական իշխանութեան հետ»[84]:

Հավանաբար այս տհաճ նամակի բովանդակությունն էր պատճառը, որ 1830 թվի ամռանը Թիֆլիսում նորեն բռնկված ժանտախտի համաճարակի համար թիֆլիսահայ բնակչությունը թախանձագին դիմում է հղում Եփրեմ կաթողիկոսին, ժանտախտի դեմ պայքարելու արդեն մի քանի անգամ փորձված միջոցին, այն է սբ. Գեղարդը այնտեղ ուղարկելու համար, սակայն ստանում են վերջինիս մերժողական պատասխանը: Պարզվում է կաթողիկոսը թիֆլիսեցիների խնդրանքը հաղորդել էր Կոմս Պասկևիչին, բայց վերջինս անդրդվելի էր մնացել իր որոշման մեջ: Բոլոր դեպքերում 1830-40-ական թթ. սբ. Գեղարդը Էջմիածնի մասունքների թվում էր, որի մասին մանրամասն հաղորդում է վանքի միաբանության անդամը, Հովի. Շահխաթունյանցը իր վերոհիշյալ աշխատության մեջ:

Սակայն, երբ 1846-47 թթ. ժանատախտի համաճարակը նորից կրկնվեց Անդրկովկասում, ապա ցարական իշխանության պաշտոնյաները ոչ միայն թույլատրեցին, այլև իրենք եղան խնդրողը, որ սբ. Գեղարդը Էջմիածնից դուրս բերվեց: Դրա ապացույցը Անդրկովկասի քաղաքական վարչության պետ, գեներալ Լադինսկու 1846 թ. մարտի 2-ի գրած նամակ-խնդրանք է Ներսես Աշտարակեցի կաթողիկոսին՝ հետևյալ բովանդակությամբ. «Ձերդ Վեհափառութիւն, ողորմած հովուապետ: Ձեր Վեհութեանը հայտնի է, որ խոլերան ջարդ անելով Պարսկաստանում, այժմ մոտենում է մեր սահմաններին: Ձերդ սրբութեանը նմանապէս հայտնի է, որ գեներալ Ոտիշչևի Վրաստանը կառավարած միջոցին երկրիս մէջ սաստկացած էր ժանտախտը և այդ ցաւը վարակում էր՝ հիւանդներին կամ նոցա իրերին դիպչելով: Այնուամենայնիւ, Ոտիշչևը, հակառակ բոլոր բժշկական դատողութեանց, կատարեալ հաւատով թոյլատրեց բերել Էջմիածնից Գեղարդը...: Չնայելով, որ ահագին բազմութիւն էր դիզուել և մարդիկ ակամայից միմյանց շփվում էին, ցաւը ոչ միայն չտարածուեց, այլ և վերջացաւ: Իսկ խոլերան չէ վարակում՝ հիւանդին մերձեցողին կամ հետը բնակուողին, այլ օդի մէջ լինելով անտեսանելի կերպիւ է հարուածում...:

Ես դառնում եմ Ձեր Վեհափառութեանը ոչ իբրև պետ երկրիս քաղաքական վարչութեան, այլ որպէս Ձեր ծանօթ Պետր Անտօնովիչ և խոնարհաբար խնդրում եմ՝ արդեօք Նախիջևանի և Երևանի գավառներում խոլերա երևցած միջոցին յարմար և կարելի չէք համարիլ դուք, որ սբ. Գեղարդը պատշաճաւոր բարեշքութեամբ պտտցնուի այն հայ գյուղերում, ուր կլինի ցաւը: Ես բոլորովին հաւատացած եմ, որ հիւանդութիւնը ոչ միայն կքչանայ, այլ և բոլորովին կկտրուի: Այդ կարող են տեսնել նաեւ մահմեդականք, և հաւատալ: Երանի և նոցա, որոնք չհաւատացողներին հաւատքի կը բերեն: Իսկ եթէ որևիցէ պատճառով այդ կը համարէք անկարելի կամ հակառակ եկեղեցական կանոնաց, այն ժամանակ խնդրում եմ Ձեր Սրբութիւնից թողնէք այս միայն ի գիտութիւն Ձեր և նամակս ամ-

[84] Անդ, էջ 411-412 ծանոթ.:

բողջապէս այրէք: Այլ ես կը մնամ հաստատ հաւատով և յուսով փրկութեան ...: Խոնարհագոյն ծառայ Պետր Լադինսկի»[85]:

Այս նամակ-խնդրագրին որպես պատասխան Ներսես Աշտարակեցու թույլտվությամբ սբ. Գեղարդը եպիսկոպոսների ու վարդապետների ուղեկցությամբ 1846 թ. -ին պտտեցնում են Նախիջևանի և Երևանի գավառների համապատասխան գյուղերում, ապա 1847 թ. այն տարվում է Թիֆլիս ու նույն տարում էլ վերադարձվում Էջմիածին: Սա վերջին դեպքն էր, որ սբ. Գեղարդը դուրս տարվեց Էջմիածնից և որքան մեզ հայտնի է նույնիսկ 1915-20 թթ. Երևանում բռնկված ժանտախտի ժամանակ սբ. Գեղարդը Մայր Աթոռի գանձատնից չհանվեց: Այսօր էլ սբ. Գեղարդը իր պահարանով հանդերձ զարդարում է Մայր Տաճարի թանգարանի ցուցափեղկը և դիտվում է Ս. Աթոռի ամենահեղինակավոր մասունքներից մեկը:

[85] Անդ, էջ 411-412:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Հրաշագործ Սուրբ Գեղարդը 7

ՂԱՐԻԲՅԱՆ Ի. Գ.

ՀՐԱՇԱԳՈՐԾ
ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ

Համակարգչային շարվածքը *Աննա Գևորգյանի*
Համակարգչային ձևավորումը *Տիգրան Ապիկյանի*

Երևանի համալսարանի հրատարակչություն, Ալեք Մանուկյան 1
Երևանի պետական համալսարանի տպարան, Աբովյան 52